Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

364

2887
891.99
Ս-37
1001/2608

MARS

ԿՈՅՐԸ

ՊԱՏԿԵՐ

Հրատ. Յ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ ԵՂԲ. ՂԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ
1902.

26.05.2015
42800

Дозволено Цензурою
11 Іюля 1902 г., г. Тифлисъ.

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈՒՓԱՐՍԵԱՆ
391

ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ

Ի նկատի առնելով, որ առանց այն էլ մեր սակաւաթիւ հեղինակների մեծ մասը զուրկ լինելով նիւթական միջոցներից, անկարող են առանձին գրքերով լոյս ընծայել իրենց աշխատութիւնները. որ այդ հեղինակների աշխատութիւնները մեծ մասամբ լոյս տեսնելով պարբերական մամուլի բանասիրականներում, հարևանցօրէն են կարդացւում, երկար ընդմիջումներով և որոշ տպաւորութիւն չը թողնելուց յետոյ էլ, ժամանակի ընթացքում մոռացութեան են տրւում. որ՝ ըստ մի տեսակ օրէնք դարձած սովորութեան, պարբերական մամուլի էջերում լոյս տեսած վէպերը, պատկերները և զրոյցները չեն ենթարկւում քննադատութեան ի վնաս թէ ընթերցող հասարակութեան և թէ իրենց՝ հեղինակների. և՝ վերջապէս՝ համոզուած լինելով, որ քաջալերութիւնը և լուրջ կրիտիկան ձեռք ձեռքի տուած ընդունակ են հանդէս բերելու եթէ ոչ

վիպական հանճարներ, գոնէ տաղանդներ.

Վճռեցի հետզհետէ լոյս ընծայել պ. Mars-ի (Արշակ) թերթերի բանասիրականներում տպուած կամ անտիպ աշխատութիւնները և ահա սրանով ընթերցող հասարակութեան սեղանի վրայ եմ դնում նրա «Քոյրը»։

Թող «Քոյրը»-ն ինքը խօսի իւր մասին և ինքը հարթի իւր ճանապարհը, իւր ասպարէզը։

Յ. ՅՈՎՍԷՓԵԱՆ։

ՔՈՅՐԸ

I.

Յուլիս ամսի վերջերքում, մի կիրակի օր էր։ Այդ օրը այնքան պարզ ու գեղեցիկ էր, որ քաղաքի բնակիչներից մեծ մասը բեռնաւորուած Ներքէթի շոգենաւերի վրայ, շտապում էին կղզիների ու արուարձանների կանաչ թաւուտքի մէջ և աղբիւրների եզերքում ժամանակ անցնելու։ Բայց կէս օրին մօտ բարձրացաւ մի ուժգին քամի և Բոսֆորի մանիշակագոյն պարզ երկնակամարը յանկարծ մթագնեց։ Սև և մռայլ ամպերի ահագին քուլաները գլորուելով ու թաւալելով գալիս անցնում էին քաղաքի վրայով։ Արևը վաղուց արդէն թագնուել էր սև սաւանի ետև, իսկ մի ժամ առաջ արևի ճառագայթների հետ գիրկընդխառն խաղացող նեղուցը փրփրել, կատաղել էր։ Կապուտակ ջուրը, կարծես ոտքի ելած, խուժում էր դէպի ափերը և կրկին նահանջում սոսկալի աղմուկով։ Թուխպը վերևից ճնշուելով աստիճանաբար իջնում էր ցած, մի

տեսակ երերուն քողի տակ թաղելով ամբողջ Կ. Պոլիսը։ Կարճ ժամանակից յետոյ, երկու քայլի վրայ դժուար էր մի բան տեսնել. հսկայական շէնքերը և մզկիթների բարձր մինարէթները լողացող թուխպի տակ ուրուականի ձև էին ստացել և նրանց նայողին թւում էր, թէ այդ ուրուականները վազում են դէպի ինքը։

Սպասւում էր սարսափելի փոթորիկ։ Քամին գնալով սաստկանում էր և փչում առանց որոշ ուղղութեան։ Հարաւից ու հիւսիսից փչող քամիները կարծես այդտեղ բաղխւում, գրկւում էին և ամբողջ ծանրութեամբ ընկնում քաղաքի վրայ։ Հրսկայական ծառերը ճկվում էին, շէնքերը դողում, սլիքները մի րոպէ տափակում էին։ Մերթ ընդ մերթ լսւում էր հեռուից երկնային ահեղ որոտ, որ արձագանք տալով թանձրացած մթնոլորտում, ստորերկրեայ ուժգին թնդիւնների տպաւորութիւն էր թողնում։ Եւ արդէն քամու հոսանքի հետ երբեմն ցած էին ընկնում անձրևի ծանր ու խոշոր կաթիլներ, գուշակել տալով, որ փոթորիկը շատ էլ հեռու չէ։ Առաւօտուայ գեղեցիկ եղանակից խաբուած բազմութիւնը, գլուխը կորցրած, շտապում էր նաւամատոյցները փոթորկին կանխելու և իրենց տները դառնալու համար։

Շոգենաւի սպասող մի այդպէսի բազմութեամբ լիքն էր նաև Բէօյուկ-Դարէի նաւամատոյցը, երբ

Շերքէթի 42 թիւ շոգենաւը Գաւաքից գալով, դարձաւ Մէզար-Բուրնին և գինով մարդու նման աջ ու ձախ երերալով, կանգ առաւ նոյն նաւամատոյցի առաջ։

Բազմութիւնը անկարգ հրմշտումով ներս խուժեց։ Մի րոպէ շոգենաւի վրայ տիրեց խառնաշփոթութիւն, իրարանցում, բայց շուտով իւրաքանչիւրը իւր համար տեղ գտաւ ու խաղաղութիւնը վերականգնեց։

Առաջին կարգի կայուտներից մէկում վաղուց նստած էր մի երիտասարդ, որի երկայն մազերը ցուլց էին տալիս, որ օտարական է։ Նա մտել էր շոգենաւը Գարաքէօյի կամուրջից Բոսֆորի վրայ պտոյտ անելու և նրա գեղարուեստական շքեղ ափերը դիտելու, որի մասին այնքան բան էր լսել ու կարդացել։ Սակայն եղանակը անսպասելի կերպով փոխուելուց յետոյ, անկարելի լինելով տախտակամածի վրայ մնալ ու շուրջը դիտել, ակամայ փսկուել էր կայուտում։ Գարաքէօյի կամուրջի ստահակլրագրավաճառներից նա գնել էր մի համար «Le petit journal» և «Արևելք»-ի վերջին համարը։ Առաջինը ծնկների վրայ դրած, կրկին ձեռքն էր առել «Արևելք»-ը ու կարդում էր, ըստ երևոյթին ձանձրոյթը փարատելու մտքով, երբ շոգենաւը մօտեցաւ Բէօյուկ-Դարէի նաւամատոյցին և քիչ ժամանակից յետոյ նոյն կայուտը մտան նախ երկու կին

և ապա մի քանի թուրք սպաներ։

Կանանցից մէկը միջահասակ էր, միջին տարիքով և բնականից աւելի հաստ ու դէր մարմնով, որ արգելք դառնալով ազատ շարժումներին, դարձնում էր դանդաղաշարժ։ Կլորիկ և հասակից աւելի առոյգ դէմքը համակրելի արտայայտութիւն ունէր, թէև վերին շրթունքի վրայ բուսած սև մազերը մի տեսակ առնական կերպարանք էին տալիս այդ կանացի դէմքին։

Կանանցից երկրորդը մի տասնուհօթ-տասնուվեց տարեկան աղջիկ էր, դէմքի նուրբ ու քնքոյշ գծագրութեամբ, աչքերի խելօք նայուածքով և լայն, արտայայտիչ ճակատով։

—Օ՛հ, ինչպէս եղանակը յանկարծ փոխուեց, լաւ էր, Զաբէլ, որ ժամանակին շոգենաւ մտանք և փոթորկից ազատուեցինք, ծանր մարմինը Սրմենակ Բէկեանի (այսպէս էր կոչւում երիտասարդը) հանդիպակաց նստարանի վրայ վայր թողնելով, ասաց տիկինը։

—Այո՛, մայր... պատասխանեց օրիորդը և իւր ու մօր վերարկուն կեռից քարշ անելով, ինքն էլ տեղաւորուեց նրա կողքին։

—Սմենևին լաւ բան չեղաւ, աւելացրեց մայրը մտազբաղ կերպով և—ապա կարծես աղջկայ տրամադրութիւնը հասկանալու համար, խօսքն ուղղեց նրան։

—Ինձ թւում է թէ դա լաւ նշան չէր, Զաբէլ։

Զաբէլը մօր հարցերին պատասխանելուց խոյս տալու մտքով, վեր ելաւ, յետ քաշեց նեղ լուսամուտի վարագոյրը, նայեց դատարկ նաւամատոյցին և կրկին բռնեց իւր տեղը։

Մայրը խօսքը նորոգելու համար յարեց.

—Նրանք գուցէ երկար սպասեն մեզ։..

—Է՛հ, թող սպասեն... ես ուրախ եմ, որ այսպէս պատահեց։

—Ուրա՞խ ես...

—Այո՛... ճիշտ ասած, մա՛յր, ես ակամայ եկայ։

—Ի՞նչպէս թէ ակամայ։

—Պատճառը չեմ կարող ասել, որովհետև... չը գիտեմ, բայց սիրտս հենց սկզբից արգելում էր ինձ։

—Այդ ինչեր ես խօսում, Զաբէլ, վշտացած շեշտով հարցրեց մայրը։

—Ես ասում եմ սրտիս թելադրածը... մա՛յր, չէ՞ որ ես այլևս երեխայ չեմ...

Մայրը յանդիմանական մի նայուածք ձգեց աղջկայ վրայ ու լռեց։

Օրիորդը մօր այդ նայուածքից կարմրելով, ցած թողեց գլուխը և բոպէական շփոթումն ու ներքին ամբոխմունքը ծածկելու նպատակով սկսեց խաղալ հովանոցի կոթից քարշ ընկած փնջիկների հետ։

Կարճ խօսակցութեան վերջին պարբերութիւնը

հետաքրքրեց Բէկիեանին, մանաւանդ դրանով նա իմացաւ, որ հայուհիներ են։ Պոլիս գալուց ի վեր, առաջին անգամն էր, որ հայուհու էր հանդիպում և արևմտեան հայուհու շրթունքից լսում էր մայրենի քաղցր բարբառը։ Բէկեանը հովանոցը կայուտի անկիւնում տեղաւորելու պատրուակով բարձրացրեց գլուխը և նայեց օրիորդին, որ դեռ շարունակում էր հովանոցի փնջիկների հետ խաղալ։ Նրա բարձր ու շնորհալի հասակը, լայն ու ճոխ ուսերքի վրայ բարձր բռնած գլուխը, որ պսակուած էր հարուստ մազերի սիրուն ալիքներով, միացած նրա դէմքի խելօք ու լուրջ արտայայտութեան և աչքերի հեզ նայուածքի հետ, տալիս էին նրան չը գիտես ինչ մի բացառիկ վեհութիւն, որ ընդունակ է ամենագողող սրտերն իսկ նուաճելու։ Փոքրիկ ու խիստ շնորհալի ձեռքերի կլորիկ մատներից մէկի վրայ փայլում էր միակ մատանիի խոշոր ադամանդը, իսկ հասուն ու ճոխ կրծքից քիչ վեր, կիսաբաց օձիքի վրայ, ամրացած էր սիրոյ սուրհանդակը—մի ոսկի թռչնիկ, որի փոքրիկ կտուցին բռնած ոսկեայ փակ ծրարի վրայ, շողշողում էր փոքրիկ ադամանդներով բանուած Souvenir բառը։

Բայց այս բոլորի մէջ, աւելի աչքի զարկողը օրիորդի արծուեռունդ քիթն էր, որը՝ Բէկեանի կարծիքով, չէր կարող մի ուրիշ դեմքի այնքան յարմարել, այնքան գեղեցիկ ներդաշնակութիւն կազմել, որքան Զաբէլի ձուաձև դէմքին։

Բէկեանը նստած, կրկին ձեռքն էր առել լրագիրը, բայց չէր կարդում։ Նրա միտքն աւելի զբաղուած էր մօր և աղջկայ մէջ տեղի ունեցած կարճ խօսակցութիւնով, մանաւանդ օրիորդի վերջին բառերով թէ «ես ասում եմ սրտիս թելադրածը»...

Եւ Բէկեանը ինքն իրեն հարցրեց.

—Ի՞նչ կը նշանակի այդ։

Ու աշխատեց լուծել այդ հարցը ոչ այնքան հոգեբանօրէն, որքան իրաւաբանօրէն։

Բայց հենց այդ ժամանակ տեղի ունեցաւ մի միջադէպ։

II

Թուրք սպաները, որ բռնել էին նոյն կայուտի միւս անկիւնը, դուրսը սկսած խօսակցութիւնը վերջացնելով, սկսեցին խօսել եղանակի յանկարծական փոփոխութեան և նեղուցի ալեկոծութեան մասին, որ՝ մանաւանդ այդքան միգապատ եղանակում, այնքան վտանգաւոր էր։ Նրանցից մէկը ընկերների երկիւղը փարատելու համար գովեց 42 թիւ շոգենաւի նաւապետ Հիւսնի էֆէնդիի ճարտարութիւնը, իւր գովասանքին կցելով նաև զա-

նազան էպիզոդներ նաւապետի կեանքից։ Այս խօսքն աննկատելի կերպով դարձաւ Գում-Գաբուի ծանօթ դէպքին Ս. Աշըգեան Պատրիարքի օրով, որ տեղի էր ունեցել նոյն ամսի տասնուհինգին։ Եւ պատմելով մի-միանց վիրաւորական մի քանի էպիզոդներ, զրոյցին տուին ծաղրական կերպարանք։

Խօսակցութիւնն՝ իհարկէ՝ հայերի մասին էր և՝ թէև նրան տուել էին սրիկայական անվայել ձև, բայց անհատական վիրաւորանքի բնաւորութիւն չունէր։ Որով ոչ այնտեղ նստած հայ կանայք, ոչ էլ Բէկեանը իրաւունք համարեցին իկարդ հրաւիրել նրանց, թէև այդ վիրաւորանքը խիստ ծանր էր գալիս մանաւանդ Բէկեանին։

Բայց շատ չանցած, սպաները, կարծես լսողներին համբերութիւնից հանելու մտքով, նախ՝ հայ կանանց հասցէին՝ ընդհանրապէս, ապա օրիորդի հասցէին՝ մասնաւորապէս, անվայել բառեր շպրտեցին։

Ու տեսնելով, որ օրիորդը կարմրում է, նրանք, խօսք մէկ արած, բոլորը միասին հռհռացին։

Բէկեանը, կարծես վաղուց գուշակելով սպաների միտքը, մի քանի րոպէ էր, ինչ կանգնել էր փոքրիկ լուսամուտի առաջ և հեռադիտակով նայում էր Ռումելի-Հիսարի հարուստ տեսարաններին, որի բարձրութեան վրայ կառուցուած է Ռօբերտ կոլէջը։ Սակայն նա երբէք չէր կարող կարծել, թէ

կը վիճակուի իրեն լսել այնպիսի բառեր, որոնք քաղաքակիրթ երկիրների հասարակաց տներումն անգամ արգելւում են։ Նա մի րոպէ շփոթուեց, ձեռքերը դողացին և քիչ մնաց, որ հեռադիտակը ցած պիտի ընկնէր։ Այնուամենայնիւ երևակայելով օրիորդի դրութիւնը, մի կերպ ինքն իրան տիրապետեց։ Որպէս տղամարդ, մանաւանդ որպէս հայ, նա ամաչում էր երես առ երես նայել օրիորդին և աշխատում էր չը լսած, չը հասկացած ձևանալ։

Այնուամենայնիւ Զաբելի մայրը չը համբերեց. նա քաղաքավարութեամբ դարձաւ սպաներին զգուշացնելով, որ իրենց խօսքերին չափ, սահման դնեն...

—Դուք պարտաւոր էք քաղաքավարութեան օրինակ հանդիսանալու, այսպէս վերջացրեց նա իւր խօսքը։

—Հայդէ, գեաւուր, ասաց նրանցից մէկը և կրկին ամենքը միաձայն հռհռացին։

—Ձեր արածը լրբութիւն է, յանդիմանեց տիկինը բարկութեամբ,—եթէ չը դատարէք, ստիպուած կը լինեմ ոստիկանութեան դիմելու։

—Ոստիկանութեան, օհո...

Եւ սկսեցին օդային համբոյրներ ղրկել օրիորդի հասցէին, խառնելով աւելի լկտի բառեր։

Զաբէլը, որ մինչև այդ ժամանակ ամօթից կարմրած դէմքը չը գիտէր ուր և ինչպէս թագ-

ցընել, վիրաւոր առիւծի նման յանկարծ վեր ցատկեց և Հովանոցի միւս ծայրից բռնելով, կոթը բոլոր ոյժով իջեցրեց նրանցից մէկի գլխին։

Բէկեանը յետ դարձաւ։ Նա յուզումից գունատուել էր ինչպէս ծեփ, իսկ երկու յօնքերի մէջտեղ, ճակատի վրայ առաջ էր եկել ուղղահայեաց մի խոր գիծ, կարծես գլուխը երկուտապակ լինելու վրայ էր։ Նա ձեռքը տարաւ անդրավարտիկի ետևի գրպանը և ջղաձգօրէն ցնցուող ափի մէջ ինչ-որ սեղմելով, յարձակողական դիրք բռնեց։ Այդ րոպէին նրա գլխով կայծակի արագութեամբ անցաւ այն միտքը թէ օրիորդի հասցրած վիրաւորանքին չը պիտի դիմանան, թէ սպաները սուր պիտի քաշեն, առաջ պիտի գայ իրարանցում, արիւնհեղ կռիւ, երբ ինքը սուսպուսած պիտի լինի զէնքով պաշտպանելու կանանց պատիւը և կեանքը...

Բայց պատահեց սրա ճիշտ հակառակը, որը Բէկեանի բորբոքուած արիւնի մէջ կարծես սառը ջուր խառնեց։

Սպան, որի գլխին իջել էր հարուածը, շտապով վերառաւ Հովանոցի կոտրուած կոթը և ասաց.

— Առէք ձեր զէնքի կտորը, քիւչիւկ հանը մ, որով ուզում էիք գլուխս փշրել... առէք, կրկին խփէք... ձեր ձեռքից հարուած կրելը շատ քաղցր է ինձ։

Ու լիրբ ժպիտը երեսին փորձեց մօտենալ

օրիորդին, որը դէմքն ափերի մէջ առած, խուլ կերպով հեկեկում էր։

Բէկեանը մի ոստիւն գործելով, կտրեց սպայի ճանապարհը և դուրս խլեց նրա ձեռքից Հովանոցի կտորը։

— Ստոր արարածներ, ասաց նա բարկութիւնից սեղմուած ակռաների մէջից։

— Դու իրաւունք չունես մեր գործերին խառնուելու, նկատեց սպան և նայեց միւս սպաներին կարծես նրանց կարծիքն իմանալու իւր ասածի վերաբերմամբ։

— Ես իրաւունք չունիմ...

— Այո՛, դու...

— Ես վաղուց իրաւունք ունէի, բայց չարեցի, մտածելով թէ վերջապէս վերջ կը դնէք ձեր լկտի վարմունքին... բայց այդ խոհեմութիւնը չունեցաք... Տեսնում եմ, որ դուք լռող քաջերից չէք, այն քաջերից, որոնք սուր են կրում, առանց նրա պատիւը հասկանալու, այն քաջերից, որոնց քաջութիւնը թոյլ և անզօր արարածներին վախեցնելուց այն կողմն չի անցնում։

Սպաները ագին ժողոված կատուի նման քաշուեցին իրենց տեղերը, բայց իսկոյն սկսեցին սովորական անպատկառութեամբ ծիծաղել։

Արմենակը, որ նոյպէս պատրաստուում էր նստել, անվեհեր դիրք բռնելով և աղճատուած

թուրքերէնով նկատեց.

—Ծիծաղեցէք, որքան կուզէք, դրանով ապացուցանում էք, որ վախկոտ նապաստակի սիրտ ունէք, որ կատուներ էք, որոնք մի մի առիւծներ են մկների առաջ միայն։

Սպաները դարձեալ ծիծաղեցին։ Բէկեանը այս անգամ այլևս ուշադրութիւն չը դարձրեց. նա նըստելով իւր տեղում, ձեռքն առաւ «Արևելք»-ը։

Այդ ժամանակ շոգենաւը կանգ առաւ Օրթաքէօյի նաւամատոյցի առաջ։ Սպաներից մէկը դուրս գալով, մի քանի բոպէից յետոյ կրկին ներս մտաւ, իւր հետ բերելով թրքական ոստիկանների մի ահագին վոհմակ։

III

Այդ միջադէպը, որին ականատես եղաւ և մասնակցեց Բէկեանը, այնքան ծանր տպաւորութիւն թողեց նրա վրայ, այնքան զօրեղ կերպով յուզեց նրան, որ լրագրական տառերի ու տողերի մէջ էլ տեսնում էր անպատկառ սպաների պատկերը։ Բայց ըստ երևոյթին մեծ ճիգէր գործ դնում իւր վրայ ներքին վրդովմունքը խեղդելու, աշխատում էր միտքը կենդրոնացնել բոլորովին ուրիշ կողմի, ուրիշ առարկայի վրայ։

—Բայց չէր լինում, չէր յաջողում իրեն։

«Արևելք»-ը ցած դնելով կրկին ձեռքն առաւ «Le petit journal»-ը աւելի նրա ծաղրանկարներով, քան բովանդակութեամբ զբաղուելու, երբ մէկը կանգնեց նրա առաջև։

Դա մի բարձրահասակ թուրք էր, երեսը մաքուր ածելած և քաղաքացիական հագուստով։ Գլխին կրում էր «համիդիէ» կոչուած վարդագոյն բարձր ֆէս, թեքած դէպի յետ, դէպի ծոծրակը, ի ցոյց դնելով մերկ ճակատը։ Ձեռքին կրում էր մի դալար մտրակ, իսկ ոտքերին երկարավիզ կօշիկներ։ Այս տարազի մէջ նա շատ նման էր ձիուց նոր իջած ճանապարհորդի։ Բայց նա ձիաւոր չէր, այլ գաղտնի ոստիկան, լրտես, թրքական բառով՝ հ ա ֆ ի է։

Մի բոպէի մէջ կայուտը շրջապատուեցաւ ոստիկաններով ու ոստիկանական զինուորներով, հրացաններով զինուած։ Մի քանիսը նրանցից հ ա ֆ ի է ի հետ ներս էին մտել և կանգնել նրա ետևում։ Ոստիկանութեան ներկայութիւնը շոգենաւում բուռն հետաքրքրութիւն զարթեցրեց ճանապարհորդների մէջ և լուրը բերնէ բերան անցնելով ահագին իրարանցում յառաջ բերեց։ Շոգենաւի զանազան ծակուծուկերից, անկիւններից դուրս թափուելով, ամենքն էլ շտապում էին դէպի հետաքրքիր դէպքի կողմը։ Հարիւրաւոր մարդիկ շոգենաւի մի կողմի վրայ խռնուելով, իրենց ծանրու-

1001/2608
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ Պետական Գրադարան
Հ.Ս.Խ.Հ. Պետական Գրադարան
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

թեան տակ թեքել էին նրան մի կողմի վրայ, որ խիստ վտանգաւոր էր մանաւանդ ծովի ալեկոծուած ժամանակ։ Նաւապետի յորդորները անկարող եղան բազմութեան խուժումը դադարեցնել, ուստի հարկ համարուեցաւ դիմելու մտրակների և հրացանի կօթերի օգնութեան։

Օր. Զաբէլը մի ըսպէ մոռանալով իրեն հասած վիրաւորանքը, շունչը իրեն քաշած, ձեռքը կրծքին սեղմած, նայում էր մէկ Բէկեանին, որ՝ արտաքուստ անտարբեր, թերթում էր պատկերազարդ թերթը, մէկ լրտեսին, որ սպաներից ոչ պակաս անպատկառ ու մի տեսակ տիրական դիրքով կանգնել էր կայուտի մէջտեղում, Բէկեանի առաջև։ Ու յուսահատութիւնից ճմլւում էր նրա սիրտը։

Մայրը բոլորովին գունաթափ, թեթևակի թինկնել էր բազմոցի կռնակին և մտքում նախատում էր աղջկանը, որ սպային խփելով, գործը մեծացրել էր, հասցնելով այդ սպառնական վիճակին։ Որպէս բուն Պօլսեցի թրքական ոստիկանական և դատարանական ապօրինութիւնների մասին բազմաթիւ օրինակներ ու փաստեր ունէր, որոնց վրայ հիմնուելով, երիտասարդին կորած էր համարում, իսկ իրենց՝ խայտառակուած։

Իսկ Բէկեանը ամենևին նշանակութիւն չէր տալիս. նա թերթում ու կարդում էր ձեռքի լրագիրը, որպէս թէ այդ իրարանցումը իւր հետ ոչ

մի առնչութիւն ունենալիս չը լինէր։

—Պարո՛ն, Է պարո՛ն... ձայն տուեց լրտեսը։

Արմենակը ոչ մի շարժում չարեց, ձևանալով թէ չի լսում և չի հետաքրքրւում։

—Սինեօր, Է սինեօր, չէ՞ք լսում։

Բէկեանը դարձեալ լուռ էր ու անշարժ, որը խիստ զայրացնում էր ոչ միայն լրտեսին, այլև թուրք սպաներին։

Զաբէլը յուսահատաբար տրորում էր ձեռքերը, իսկ մայրը զարմանում երիտասարդի անտարբերութեան վրայ, որ յանդգնում էր արհամարել տէրութեան պաշտօնեային և չը պատասխանել նրան։

—Monsieur! չէ՞ք լսում, ձեզ հետ եմ, բարկացած գոչեց լրտեսը աւելի մօտենալով։

Արմենակը բարձրացրեց գլուխը և նայեց ուղիղ լրտեսի աչքերի մէջ։

—Ի՞նչպէս է ձեր անունը։

—Ո՞վ է անունս հարցնողը, արհամարական շեշտով հարցրեց Բէկեանը։

—Այդ դու յետոյ կիմանաս, որպէս և մենք կիմանանք քո անունը, ո՞վ և ի՞նչ լինելդ... այժմ ասա՛, ի՞նչպէս համարձակուեցար անպատուել Վեհափառ Սուլթանի սպաներին։

—Որովհետև ձեզ չեմ ճանաչում, ուստի չեմ էլ պատասխանում։

Ու կրկին ձեռքն առաւ «Le petit jurnal»-ը Լրտեսը դառնալով սպաներին ասաց.

—Անպատճառ հայ կոմիտէի անդամներից է... նայեցէք երկայն մազերին ու սուր մօրուքին... դրանք յայտնի նշաններ են. որով ճանաչում են միմիանց... Ֆէսադնեը...:

Ու կրկին դարձաւ Բէկեանին:

—Հայդէ, վեր էլ...

Բէկեանը բարձրացրեց գլուխը և բարկութիւնից վառուող աչքերը ձգեց լրտեսի վրայ:

Ապա զսպուած ձայնով ասաց.

—Ասացի, որ ձեզ չեմ ճանանչում, հետևապէս չեմ կարող ոչ պատասխանել, ոչ էլ հետևել ձեզ:

—Իսկ ես հրամայում եմ վերկենալ, հայդէ... երկար սպասելու ժամանակ չունեմ, շուտով Բէշիկթաշ կը հասնենք:

Եւ ձեռքը մեկնեց օձիքից բռնելու:

Արմենակը սաստիկ թափով հեռացրեց նրա ձեռքն իրենից և պատուիրեց զգոյշ և քաղաքավարի լինել:

—Տեսնում էք սրա յամառութիւնն ու պատասխանները... չասացի, որ կոմիտէի անդամներից է... անպատճառ Փաթրիք էֆէնդիի դէմ ցոյց անողներից մէկը լինելու է, որին որոնում են...է, սինեօր, ասում եմ վերկաց, ապա թէ ոչ,

քարշտալով կը տանեմ:

Լրտեսի այս սպառնական խօսքերի վրայ Զաբէլի սիրտը դող առաւ և մտածում էր, թէ ինքն ինչ դիրք պէտք է բռնի, եթէ լրտեսը մտածի խօսքից գործի անցնել:

—Քարշ տալ... հեգնական ժպիտով կրկնեց Բէկեանը և աւելացրեց.

—Դուք քարշտալ կարող էք ձեր անպաշտպան հպատակներին միայն, իսկ ինձ՝ ոչ, առանց արժանաւոր պատիժ կրելու:

—Դուք անցագիր ունէք:

Բէկեանը մտածեց բացասական պատասխան տալ, բայց միտքը փոխելով պատասխանեց.

—Իհարկէ... և իմ անցագիրը ցոյց տալու զատիւը միայն կարող եմ անել ձեզ, այն էլ գըլխիցս ռադ անելու նպատակով:

Եւ՝ անցագիրը ծոցագրպանից հանելով, աւելացրեց.

—Սրանով, ի դէպ, կարող էք իմանալ նաև ով լինելս, անունս և այլն և՝ ըստ հարկին, դիմել իմ հիւպատոսարանին:

Երկգլխեան արծիւը դրոշմուած տեսնելով անցագրի ճակատին, լրտեսի ձեռքերն ու ոտքերը թուլացան, այնինչ Զաբէլը հազիւ կարողացաւ զըսպել ուրախութեան ճիչը և ազատ շունչ առաւ:

Իսկ ինչ վերաբերում էր սպաներին, նրանք

ապշութեամբ նայեցին միմիանց և «Մոսկով թաբաղասը իմիշ» (ռուսահպատակ է եղել) ասելով, ըստ կարելոյն, մէկիկ-մէկիկ դուրս սողացին կայուտից։

Լրտեսը մնաց մենակ։ Մի բոլէ առաջ տիրաբար յոխորտացող և սպառնալիքներ կարդացող մարդը, այժմ մուկն էր կտրել։ Նա անդադար թերթում էր անցագիրը, ինքն էլ չիմանալով ինչու, որովհետև նրանից ոչ մի բառ չէր հասկանում։ Մի քանի բոլէ անորոշ վիճակի մէջ մնալուց յետոյ, ոստիկան զինուորներին հրամայեց դուրս ելնել։ Ոստիկանները ինչպէս մեքենայաբար եկել էին, նոյնպէս մեքենայաբար դուրս ելան։ Բոլորովին առանձին մնալով, լրտեսը անցագիրը դարձրեց Արմենակին և սկսեց ներողութիւն խնդրել, որ իրեն անհանգիստ արին։ Նա քծնողաբար յարեց, որ սպաներն իրեն մոլորացրել են, թէ դրանք շատ են երես առել, բայց ինքը պիտի աշխատի պատժել տալ նրանց հանումներին հասցրած վիրաւորանքի համար։ Ու շողոքորթիչ ձայնով սկսեց բացատրել, թէ որքան ծանր ու փափուկ է իւր պաշտօնը, որքան լուրջ ու պատասխանատու։ Չը մոռացաւ աւելացնել նաև այն, որ իրենք գիշեր ու ցերեկ, ձիւն ու անձրևին, անքուն, անդադար հսկում են մի կողմից՝ բնակիչների անդորրութեան ու ապահովութեան վրայ, միւս կողմից՝ պաշտօնեաների վարմունքի ու վերաբերմունքի վրայ դէպի

հպատակները, առանց ցեղի, սեռի ու ազգի խտրութեան...

Ու հազիւ լսելի ձայնով ասաց.

—Մի քանի ղուրուշ խահուէ փարասի չէ՞ք տայ խեղճ ոստիկաններին, որոնք իրենց գոյութիւնը պահպանում են բացառապէս առատաձեռն մարդկանց շնորհած նուէրներով։

—Եւ ոչ իսկ մի փարայ, պատասխանեց Բէկեանը ձեռքի արհամարական շարժումով, որովհետև այժմ էլ նրան բարկութիւնից հանում էին լրտեսի ստոր շողոքորթութիւնները։

—Է՛հ, դուք ողջ լինիք, ասաց հ ա ֆ ի է ն և խոնարհաբար գլուխ իջեցնելով դուրս գնաց։

IV

Բէօյուկ-Դարէում սպասուող փոթորիկը 42 թիւ շոգենաւին վրայ հասաւ Բէշիկթաշի մօտ։ Նեղուցն աւելի ևս ալեկոծուել, փրփրել էր, կարծես յատակից եռում, եփում լինէր։ Մէգի կապարագոյն թանձր վարագոյրի տակ թաղուած էր ամբողջ քաղաքը։ Քամին շառաչելով գալիս, անցնում էր։ Գոռում էր երկինքը, գոռում էր ալեկոծուած ծովը։ Զորս կողմից լսւում էր փոթորկից ցնցուող ծառերի ճռնչիւնը և ամեն անգամ, երբ փայլատակում էր կայծակը, երկնքից թափւում էր այն-

պիսի հեղեղ, որպէս թէ ծովը յատակն իվեր շրջուած, քաղաքի գլխին թափուելիս լինէր։

Երկու քայլի վրայ ոչինչ չէր երևում։ Դրութիւնը ծովի վրայ խիստ վտանգաւոր էր։ Շոգենաւը սուլում էր անդադար բոլոր ոյժով, օգնութիւն կանչող վիրաւոր առիւծի նման և նրա զիլ, բեկբեկուող ձայնը միախառնուելով քամու մռնչիւնի, երկնքի դղրդիւնի և ծովի ծափ ու շփոցի հետ, շուրջը տարածում էր երկիւղ ու տարսափ։ Արհաւիրքը պատել էր բոլոր ճանապարհորդների սրտերը։ Սմենքն էլ սպասում էին այն վայրենի, հսկայ ալիքին, որ մի հարուածով իւր տակը պիտի թաղէր իրենց։

Այդ բոպէին թերևս Բէկեանը միակ մարդն էր, որի վրայ ոչ մի ազդեցութիւն չէր գործում բնութեան արհաւիրքը։ Տխուր միջադէպը այնպէս յուզել էր նրան, որ նրա ջղերը դեռ շարունակում էին մնալ նոյն լարուած վիճակի մէջ։ Եւ նրա յուզուած բորբոքուած միտքը թափառում էր օսմանեան պետութեան հեռաւոր անկիւններում։ Ի՞նչեր էին կատարւում այնտեղ, այդ պետութեան խուլ անկիւններում, ուր օրէնք, իրաւունք ու արդարութիւն ասածներդ երբէք գոյութիւն չէին ունեցել։ Նա մինչև այդ օրը լսած և կարդացածները բաղդատում էր հենց նոր իւր աչքով տեսածի հետ և դուրս էր բերում տխուր, յուսահատական եզրակացութիւններ։ Պատկերացնելով իրեն միլիոնաւոր դժբախտ քրիստոնեաների կրած տառապանքները, տանջանքներն ու քրոնիքական անպատուութիւնները, այն քրիստոնեաների, որոնք ճակատագրի չը գիտես ինչ մի քմահաճ կարգադրութեամբ ընկել էին այդ աւազակ, արիւնարբու և բարբարոս պետութեան ծանր լծի տակ—նրան պաշարում էր խորին յուսահատութիւն...

—Ի՞նչ բարբարոսութիւններ են տեղի ունենում հեռաւոր դաւառներում, մտածեց նա ջղային մատների մէջ տրորելով լրագիրը։

Փոթորիկը դեռ շարունակւում էր նոյն սաստկութեամբ և շոգենաւը թեթև տաշեղի նման տատանւում էր Բոսֆորի ալիքների վրայ։

Տիկինը կայուտի պատին թինկնած, խփել էր աչքերը, թւում էր թէ ներհում է։

Իսկ Զաբէլը դաղտագողի նայում էր Բէկեանին, հետևում նրա դիմագծերի արագ փոփոխութիւններին, որոնք ցոլացնում էին նրա հոգեկան վիճակը։ Եւ թւում էր նրան, թէ բաց գրքի նման կարդում է այդ երիտասարդի սիրտը, նրա հոգեկան խռովութիւններն ու յուզումները։

—Ես եղայ պատճառը...

Ասաց Զաբէլն իւր մտքում և անցած միջադէպը իւր ամբողջ մանրամասնութեամբ պատկերացաւ նրա աչքին։ Բայց այդ երկար չը տեւեց.

հակառակ իւր կամքի, նա կրկին սկսեց մտածել անծանօթ երիտասարդի մասին, որն ինքն իրեն վտանգի ենթարկելով, պաշտպանել էր մի անծանօթ աղջկայ պատիւը։

—Ո՞վ է արդեօք...

Այս հարցն տրած ժամանակ նա երկիւղածութեամբ նայեց երիտասարդին։ Այդ ժամանակ նա զգաց, որ կրծքի տակ զգում է ինչ-որ մի քաղցր, հեշտալի թրթռում և միևնոյն ժամանակ մի անծանօթ մղում դէպի անծանօթ երիտասարդը։

—Այս ինչ է կատարւում իմ մէջ...

Կրկնեց Զաբէլը իւր մտքում, բայց այս հարցի պատասխանի մասին դեռ չը մտածած, շոգենաւը զարկուեց Գարաքէօյի կամուրջին կից նաւամատոյցին։ Շոգենաւը սաստիկ ցնցուեց, ցնցելով ու պատեպատ զարկելով ճանապարհորդներին։

Բէկեանը կարծես քնից զարթնելով, բարձրացրեց գլուխը։

Տիկինը նոյնպէս ցնցուեց և աչքերը բանալով, նախ մի տեսակ տարակուսանքով նայեց շուրջը, ապա մօտեցաւ կայուտի լուսամուտին։

—Փառք Աստծու, անվտանգ հասանք, ասաց նա։

Այդ ժամանակ Զաբէլը ուղղուեց իւր տեղում, բայց ակամայից հայեացքը կրկին դարձաւ դէպի Բէկեանը։ Երկուսի նայուածքները հանդիպեցին միմիանց և երկուսի երակներով էլ անցաւ

մի անծանօթ սարսուռ։ Զաբէլը զգալի կերպով կարմրելով, խոնարհեց գլուխը և անգիտակցաբար սկսեց խաղալ մատանիի հետ։ Օրիորդի կարմրութիւնը շփոթեցրեց Արմենակին և շփոթութիւնը թագցնելու մտքով, դուրս հանեց ժամացոյցն ու ուղղակի օրիորդին դառնալով ասաց.

—Ժամը հինգն է. երկու և մի քառորդ ժամ տևեց Բէօյուկ-Դարէից այստեղ։

—Շատ դանդաղ անցանք, պատասխանեց Զաբէլը առանց գլուխը բարձրացնելու։

—Բէօյուկ-Դարէից այստեղ քանի՞ մղոն կըլինի։

—Ճիշտ չը գիտեմ, սակայն Շիրքէթի նոր շոգենաւերը, որոնցից մէկն է 42 թ. շոգենաւը, անցնում են երեք քառորդ ժամում, ուղիղ գծով. բայց որովհետև այդ շոգենաւերը մի ժամում տասըն և ութ մղոն են կտրում, այս հաշուով Բէօյուկ-Դարէից այստեղ պէտք է լինի մօտաւորապէս տասն և չորս ծովային մղոն։

—Սակայն այդ հաշիւը լաւ եղանակի հաշիւ է, մէջ մտաւ մայրը կրկին նստելով.—տեսնում էք առևտրական բոլոր շոգենաւերն ու առագաստանաւերը բացառապէս այստեղ են խարիսխ ձգած, այսինքն Ոսկեղջիւրի բերանին, իսկ դրանց միջով անցնել, մանաւանդ երբ եղանակը վատ է, ծովն ալեկոծուած և միգապատ, շատ վտանգաւոր է և անցնում են շատ դանդաղ... Այս էլ պէտք է նկա-

տել, որ Շիրքէթի նաւապետները բացառապէս մահմեդականներ են, որոնք շատ վայրի վերոյ տեղեկութիւն և փորձառութիւն ունեն նաւավարութեան արհեստի վերաբերմամբ...

—Ի՞նչպէս... հապա ինչպէս են ամբողջ մի շոգենաւ հաւատում նրանց։

—Զարմանալու բան չը կայ, նկատեց Զաբէլը համարձակօրէն Արմենակի երեսին նայելով. —ինչպէս որ երեկուայ զինուորն այսօր փաշայ է դառնում և երկրի կառավարութեան ղեկն ստանձնում, այնպէս էլ երեկուայ նաւակավարն այսօր դառնում է նաւապետ և շոգենաւի ճակատագրի հետ միասին խաղում է և ճանապարհորդների ճակատագրի հետ...

—Տարօրինակ բան է, օրիորդի խօսքն ընդմիջելով բացականչեց Բէկեանը.

—Այո՛, տարօրինակ է, բայց այդ տարօրինակութիւնը Թուրքիայում մի տիրապետող սիստեմ է... ոչինչ չը կայ այստեղ, որ հիմնուած չը լինի տարօրինակութեան վրայ, որովհետև Թուրքերը հիմնական օրէնք, դիսցիպլինա և այլն չեն ընդունում և չեն կարող տանել...

—Ի՞նչու...

—Որովհետև ոչ մի տեսակ մրցութեան դիմանալ չեն կարող։ Եթէ ամեն բանում պահանջուէր մասնագիտական հմտութիւն, Թուրքերին կը մնար

կօշիկներ մաքրել միայն։

Բէկեանը լռեց նա տեսաւ, որ օրիորդի կարծիքը շատ ճիշտ է, որ ինքն էլ հենց այդպէս է համոզուած։

Բայց այդ լռութիւնը ընդհատեց օրիորդը հարցնելով.

Էֆէնդի՛, դուք Կովկասցի՞ էք։

—Այո՛, օրիորդ և յիշեց իւր ծննդավայրի անունը։

—Շատո՞ւց է այստեղ էք։

—Երրորդ օրն է...

—Երրորդ օ՞ր... Եւ քիչ մնաց ծանր փորձանքի պիտի ենթարկուէիք... ահա՛ ձեզ մի անիծեալ երկիր...

—Անիծեալ կառավարութիւն ասա՛, ուղղեց մայրը, երկիրն, ընդհակառակը, շատ օրհնուած է։

Կրկին տիրեց խորին լռութիւն։ Արմենակն այդ ժամանակ նայում էր, թէ ինչպէս շոգենաւը յետ ու առաջ լողալով կամաց կամաց մօտենում էր նաւամատոյցին և ինչպէս հաստ չուանները ձեռքերին բռնած նաւաստիները, շոգենաւի տախտակամրջից դուրս կանգնած, պատրաստւում էին շոգենաւը կապոտել։

Զաբէլը, որ նոյնպէս նայում էր նաւամատոյցի կողմը, յանկարծ դառնալով ասաց,

—Էֆէնդի՛, թէև անծանօթ, բայց դուք

պաշտպանեցիք ինձ. թոյլ տուէք իմ շնորհակալութիւնս...

—Խնդրեմ. շնորհակալութեան ոչ մի բառ, ընդմիջեց նրա խօսքը Բէկեանը.—ես իմ պարտքս կատարեցի, օրիորդ, դեռ զգում եմ, որ լիովին չը կատարեցի... Ո՞վ էլ լինէր իմ տեղ, լինէր ռուս, ֆրանսիացի, գերմանացի, նոյնիսկ նենգաւոր յոյն, հաւատացած եմ, որ նոյնը կանէր։

—Գուցէ... և այն ժամանակ մենք պարտական էինք շնորհակալ լինելու ռուսից, ֆրանսիացուց, գերմանացուց, նոյնիսկ նենգաւոր յոյնից... Այդ դեռ լոկ կարծիք է, ենթադրութիւն է... այնինչ արդէն կատարուած փաստ է, որ այդ անախորժ միջադէպին դուք վերջ տուիք։

—Վերջ տուէ՞... տիկնոջ խօսքի վրայ բացականչեց Արմենակը։

Եւ գլուխը խոնարհելով ափին, ինքը իւր հետ խօսող մարդու նման աւելացրեց.

—Այսօր, այո՛, գուցէ վերջ տրուեցաւ, վերջ տրուեցաւ մեզ հետ և մեր աչքի առաջև կատարուող դէպքին... բայց մեզնից մի քիչ հեռու, մի ուրիշ շրջենաւի վրայ, քաղաքի մի ուրիշ անկիւնում, պետութեան մի ուրիշ հեռաւոր քաղաքում, գիւղում կամ աւանում միթէ չեն կրկնւում հենց այս վայրկեանիս աւելի խայտառակ դէպքեր։ Պաշտօնեաները, մանաւանդ զինուորականները, որոնք անց-

նում են զուտ պետական կրթական բովից, նրանք ամեն մի պետութեան բարոյականի չերմաչափներն են ներկայացնում... Անկաւ՞ղ է պաշտօնեան, խախտո՞ւմ է ուրիշի իրաւունքը, վիրաւորո՞ւմ է ուրիշի պատիւը, գողանո՞ւմ, յափշտակո՞ւմ, կողոպտո՞ւմ է—դուք կարող էք ասել, որ այդ պետութիւնը հիմնուած է անօրէնութեան, անարդարութեան և անիրաւութեան վրայ... Ուրեմն կարելի է համարձակ ասել, որ այս երկրի մէջ օրէնք, իրաւունք, արդարադատութիւն չը կայ և չի կարելի սպասել... Քանի որ գոյութիւն ունի այս պետութիւնը, երկրագնդիս այն մասը, որ աշխարհագրականապէս կոչւում է Թուրքիայ, միշտ եղել է և կը լինի անիրաւութիւնների, բարբարոսութիւնների մի ընդարձակ թատերաբեմ, նախատինք բերելով լուսաւորուած մարդկութեան...

—Անհատների նման, մարդկութիւնն էլ ունի իւր հիւանդոտ անդամները, բժշկութեան կարօտ կողմերը. ճակատին թափուած գանգուր մազերը յետ տանելով, շարունակեց Բէկեանը.—այդ հիւանդոտ անդամներից մէկն ու սպառնականը եղել է և է Թուրքիան՝ ընդհանրապէս, Թուրք կառավարութիւնը՝ մասնաւորապէս։ Չի կարելի ասել, թէ Եւրոպան այնքան միամիտ լաւատեսներից է, որ համոզուած չէ թէ Թուրքիան երբէք կարող չէ բարեկարգուել, կարող չէ առողջանալ... Ընդհա-

կառակը... Բայց որպէս անհատների, նոյնպէս և պետութիւնների մէջ գոյութիւն ունի քրոնիքական ագահութիւն և այդ պետութիւնների ագահութեան վրայ հիմնուած շահերը թոյլ չեն տալիս միանալու և վճռական անդամահատութեան ենթարկելու, միանգամ ընդ միշտ երկրիս վրայից սրբելու այն նեխած, ապականուած մասը, անդամը, որ կոչւում է Թուրքիա և որի նեխած մարմնից բարձրացող ժահահոտութիւնը ծածկում է քրիստոնէական խնկի անուշահոտութիւնը...

Բէկեանը այնպէս էր ոգևորուել, որ ամենևին չէր մտածում թէ այն նիւթը, որի մասին խօսում է ինքը հասկանալի՞, մարսելի՞ կամ հաճելի՞ է լսողներին: Նա խօսելու պահանջ էր զգում և այն ոչ թէ լսել տալու համար, այլ իւր մտքերի հեղեղով իւր ներքին ամբոխմունքը դատարեցնելու, խեղդելու մտքով: Եւ տեղի վրայ ուղղուելով աւելացրեց.

—Քրիստոնէութիւնը քաղաքակրթութեան զարգացման գլխաւոր ֆակտորներից մէկն է հանդիսացել: Բայց չը գիտեմ ի՞նչու, քրիստոնէութեան բերած քաղաքակրթութիւնը մինչև այսօր փայլել է իւր միակողմանիութեամբ, նրա կշիռքի նժարի մի ծայրը այնքան վեր է եղել, որքան միւսը վայր: Օրինակ. Քրիստոնէութիւնը մի որոշ ժամանակաշրջանում պատրաստում էր զուտ ոգիներ, խեղդելով մտքի շարժումներն ու թռիչքները. իսկ

այսօր մարդկային միտքը հասած է զարմանալի կատարելութեան, նա հասնում է մինչև երկնային մարմինները և երկրի խորքերը, այնինչ հոգին դատարկ է, դատարկ: Քանի որ չը կայ մտքի և հոգոյ զարգացման մէջ հաւասարակշռութիւն, արդարադատութիւն, անկեղծութիւն կարող չէ լինել... Ես կարող եմ յանկէ յանուանէ յիշել բարձր քաղաքակրթութեան հասած այնպիսի պետութիւններ, որոնք Թուրքից ոչ պակաս բարբարոսաբար հալածում են իրենց օտարադաւան քրիստոնեայ հպատակներին... Ամենից ծիծաղելին այն է, որ այդ հալածանքն անում են յանուն քրիստոնէութեան, յանուն քաղաքակրթութեան: Ինչո՞վ բացատրել եզուիտների և պաստէօրների տենդային գործունէութիւնը հայերի մէջ, իսկ կաթոլիկ և բողոքական պետութիւնների ցոյց տուած հզօր պաշտպանութիւնը այդ մարդորսներին... Իսկ այնտեղ, իրենց կողքին, իրենց քթի տակ ոչ-քրիստոնեայ մի ազգ, քաղաքակրթութեան ոչ մի նշոյլ ցոյց չը տուող մահմեդականութիւնը սիստեմատիքաբար ջնջում է մի ամբողջ քրիստոնեայ ազգ... Ո՛հ, այս նիւթի մասին խօսելն անդամ յուսահատութիւն է բերում մարդուս, որովհետև ես շատ լաւ գիտեմ, թէ քաղաքակրթութեան և մարդասիրութեան անունով յոխորտացող մեծ պետութիւնները ի՞նչու աչք են խփում Թուրքիայի նկատմամբ, ի՞նչու ձեռք չեն

մեկնում իրենց ճակատից սրբելու թուրքիայ կոչուած ամօթալի կնիքը...

—Թերևս ժամանակը դեռ հասած չէ, դեռ պիտի քաւենք մեր անմիաբանութեան մէջ ունեցած յանցանքը, պիտի վայելենք նրա բերած դառն պտուղը, նկատեց տիկինը:

Զաբէլը ոչինչ չը խօսեց, նա ամբողջ ժամանակ նայում էր Արմենակին և նրա նայուածքի մէջ կար յափշտակութիւնից ու հիացմունքից աւելի մեծ բան:

Տիկնոջ արած նկատողութեան վրայ, Բէկեանը ձեռքի մի յուսահատական շարժում արեց, ապա ձեռքն առաւ «Le petit jurnal»-ը:

Այդ ժամանակ շոգենաւը երկրորդ անգամ զարկուեց նաւամատոյցին, երբ բազմութիւնը անկարգ կերպով սկսեց դուրս խուժել դէպի կամուրջը:

Տիկինը վերելաւ, նոյնը պատուիրելով և Զաբէլին: Արմենակը արդէն պատրաստ էր և կըրթուած երիտասարդի շնորհալիութեամբ, նա դուռը բաց արեց, երբ տիկինը ուզեց դուրս գնալ: Օրիորդը նոյնպէս հետևեց մօրը, բայց դեռ դուրս չելած, ձեռքը մեկնեց Բէկեանին և ասաց.

—Շնորհակալ եմ...

Արմենակը շտապեց սեղմել նրա ձեռքը, բայց չը կարողացաւ պատասխանել. ինչպէս ասած, լեզուն կպաւ: Նրան թւաց թէ իւր առաջև կանգնած է

էլէքտրականութեամբ յագեցած մի տարը, թէ էլէքտրական ուժեղ հոսանքը ձեռքի միջոցով անցնում է իւր մէջ, վազում երակների միջով և ցընցում է իւր սիրտը, հոգին, էլէքտրականացնում է իւր ուղեղը, ամբողջ էութիւնը: Ու նայում էր նրա կեանքի կրակով վառուող աչքերին. նայում էր խորին յափշտակութեամբ, որպէս թէ առաջին անգամն էր հանդիպում նրան:

Վերջապէս պատասխանեց.

—Զարժէ, օրիորդ...

Այդ ժամանակ մայրը, որ մի երկու քայլ առաջ էր գնացել, կրկին յետ դարձաւ:

Զաբէլը աւելացրեց ժպտելով.

—Մ'թէ այս մեր առաջին և վերջին հանդիպումը պէտքէ լինի:

—Ճանապարհորդութեան մէջ շատերն են դիպուածով հանդիպում միմիանց... Պատահում է, որ այդ հանդիպումը դառնում է սկիզբն տևական բարեկամութեան. պատահում է և դրա հակառակը, այսինքն և՛ սկիզբն և՛ վերջը, նայելով թէ հանդիպողները ինչպիսի տպաւորութիւն են թողնում իրար վրայ... Իսկ եթէ հաճելի է ձեզ, օրիորդ, որ մեր հանդիպումը, այն էլ դիպուածոյ տխուր հանդիպումը վերջինը չը լինի, համարձակւում եմ խոստովանելու, որ այդ նաև իմ փափագն է... Այս օրուան օրը ես երբէք չեմ կարող մոռանալ, որով-

հետև նա իմ աչքին բաց արեց երկու նոր աշխարհ...

Արմենակը յուզումից դողացող ձայնով աւելացրեց.

—Այո՛, երկու նոր աշխարհ, մէկը–լի կեանքով ու քաղցրութեամբ, միւսը-լի արիւն ու արցունքով...

Ու այցետոմսը նրան մեկնելով, ասաց.

—Բնակւում եմ Hotel Bristol-ում, ուր ժամանակաւոր հիւր եմ։

—Ժամանակաւոր հիւր, հարցրեց տիկինը աւելի մօտենալով։

—Այո՛... մի քանի օրից կը մեկնեմ դէպի Պարիզ։

—Ուրեմն պէտք է խնդրեմ, որ վաղը մեզ մօտ ճաշելու պատիւն անէք, աշխոյժով վրաբերեց տիկինը, աւելացնելով, որ ինքը Կովկասցի հայերի մասին միշտ լաւ գաղափար է ունեցել, որ այդ գաղափարը ներշնչել է իրեն ամուսինը, թէ նա էլ, այսինքն ամուսինը, շատ կուրախանայ...

—Ուրախութեամբ, տիկին. մերժելու ոչ մի պատճառ չունեմ, իսկ ուրախութեամբ ընդունելու շատ պատճառներ։

Ու նայեց օրիորդին։

Զաբէլը շփոթուեց ու կարմրեց և մօր նայուածքից խոյս տալու մտքով դարձրեց երեսը, որպէս թէ ինչ-որ փնտրում է։

—Ուրեմն խոստացէք ժամը ճիշտ տասներկուսին հիւրանոցում գտնուել, որոշեալ ժամին մեր կառքը կը գայ ձեզ մեր տունը առաջնորդելու... Որպէս քաղաքին անծանօթ օտարական մեր տունը գտնել դժուար է։

—Խոստանում եմ, տիկին, ասաց և սեղմեց նրա ձեռքը։

Ապա դարձաւ Զաբէլին.

—Ցը տեսութիւն, օրիորդ...

Զաբէլը ձեռքը մեկնեց, հազիւ լսելի ձայնով պատասխանեց նրան, բայց չը համարձակուեց գլուխը վեր բարձրացնել։

Նրանք բաժանուեցին։

V.

Միւս օրը Օդեանների սեփական կառքը Արմենակին տարաւ խոստացած տունը։ Տան հայրը՝ Գուրգէն էֆ. Օդեանը, որ լիսուն տարու մօտ մարդ էր, այդ օրը յատկապէս տանն էր մնացել Կովկասցի հիւրին ընդունելու համար։ Եւ նա առաջին անգամ ինքը դիմաւորեց նրան ասելով.

—Ես սիրում եմ Կովկասցիներին, նրանց մէջ կեանք կայ, հոգի կայ...

Եւ թևքը մտնելով առաջնորդեց ընդունարանը։

—Մ'ինթէ նոյն կեանքը, նոյն հոգին պակա-

սում է Թրքահայերի մէջ, ժպտալով հարցրեց Ար-
մենակը։

—Ահագին տարբերութիւն կայ այդ երկու ժողովուրդների մէջ... և այդ տարբերութիւնն առաջացնողը միջավայրն է, տիրապետող մթնոլորտը... Ի՞նչ կարող ենք դառնալ Թուրքի ձեռքում, Թուրքիոյ նեխած մթնոլորտում... Նրա տիրապետութիւնը Թունաւորում է մեզ... Նա կանգնել է մահամերձ և երեսը դարձրել դէպի խաւարը, դէպի դերեզման, դէպի կորստեան անդունդը... Նա փախչում է լոյսից—մեզ էլ իւր ետևից քարշ է տալիս դէպի նոյն խաւարը, նոյն կորստեան անդունդը, ուր՝ վերջապէս, պիտի Թաղուի ինքը...

—Այդ ճիշտ է, վայրկեանական տխրութեամբ նկատեց Բէկեանը։

Այդ ժամանակ ներս մտաւ տանտիկինը իւր աղջկայ և որդու հետ։

Գուրգէն էֆ. Բէկեանի ուշադրութիւնը դարձնելով դէպի նրանց, ասաց.

—Ահա կինս, Մարի Օդեան, որի հետ ծանօթ էք... այս էլ միակ աղջիկս է, Զաբէլը, որի հետ նոյնպէս ծանօթ էք... Որքան էլ տխուր և անպատուաբեր եղած լինէր երեկուայ միջադէպը, այնուամենայնիւ մենք հենց այդ միջադէպին ենք պարտական, որ այսօր ձեզ մեր հիւրը տեսնելու պատիւն ունենք... Այդ առթիւ շատ ուրախ եմ...

Կովկասցիքդ մեզ հ ո ս ո ս էք կոչում, սակայն չը կարծէք, թէ իմ այս բոպէիս ունեցած զգացումներս կեղծ են։ Ես խորշում եմ կեղծ, պատեր բաներից...

—Բայց մոռացաք ինձ էֆէնդուն ներկայացնել, հայը...

—Ա՛խ, այո՛, մոռացայ. սա էլ իմ միակ որդին է, Բաբկէնը, տարիքով քսաներկու—քսաներեք։ Թէև արդէն ոտքէ դրել ժամանակակից գրագէտների շրջանը։

Բէկեանը մի շարժում արեց, որով Գուրգէն էֆ. ձեռքի համապատասխան շարժումով նկատեց.

—Գուցէ դուք պատրաստւում էք շնորհաւորեալ ինձ... խնդրեմ, թողէք այդ միտքը. ծանրադբլուխ երիտասարդների կատարեալ սով է Պոլսում։ Բառախաղները հռչակւում են—խորիմաստ գրագէտներ, զառանցանքները՝ փիլիսոփայութիւն... Դա մեր ամենամեծ և անբուժելի հիւանդութիւնն է։

Այնուամենայնիւ Բէկեանը շատ սիրալիր կերպով սեղմեց Բաբկէնի ձեռքը, որ իւր հագուստի մաքրութեամբ ու շնորհալիութեամբ, իւր գլխի սանրուածքով, շարժումով և այլն ներկայացնում էր որպէս մի կատարեալ ջենտելմէն։

—Հայրս ինձ բաւական լաւ ներկայացրեց ձեզ, ասաց Բաբկէնը հեգնելով։

—Հայրական կատակներ են, որոնցից կարելի

չէ նեղանալ. ինչպէս տեսնում եմ, ձեր հայրը սիրում է կատակներ անել և ենթադրում եմ, որ մօտիկ բարեկամ պէտք լինի ձեր հռչակաւոր երկիծաբան Պարոնեանին...

—Իզուր էք ասածս սխալ թարգմանում, աշխոյժով փաստաբանեց Գուրգէն էֆէնդին.—իրաւ որ Պարոնեանը անձնական բարեկամս է, բայց ասածս կատակ չէր: Միայն դրանով ես որդուս չեմ մեղադրում. նա ժամանակի ծնունդ է, այն ժամանակի, երբ հաւերը երկաթի հաւկիթներ են դնում... Եւ այդ ահագին նշանակութիւն և ազդեցութիւն ունի... մեր ժամանակը «տասն չափիր, մէկ կտրիր»-ի ժամանակ էր, այնինչ այժմ կտրելուց յետոյ են չափում.—այս է մեր և իրենց մէջ եղած տարբերութիւնը:

—Եւ աչքի զարկող ու անհամեմատ մեծ տարբերութիւն է, այնպէս չէ՞, պ. Բէկեան:

—Վկայի պէտք չկայ, վրաբերեց Գուրգէն էֆ.—այդ ես ինքս խոստովանում եմ և այդ տարբերութիւնը կայանում է նրա մէջ, որ մենք մինչև մի բան էինք շինում, տասնեակ տարիներ էր անցնում, այնինչ այժմ շ ի ն ո ւ մ են կարճ ժամանակամիջոցում...

—Հայրս ք ա ն դ ո ւ մ են պիտի ասէր, բայց խնայեց, նկատեց օրիորդը ժպտալով:

—Կեցցէս, աղջիկս, լաւ գտար, զարմանալի մտագէտ ես, եթէ կարելի է այդ բառը գործածել:

Այնուհետև խօսքը դարձաւ երեկուայ փոթորկին և շոգենաւում տեղի ունեցած միջադէպին: Բաբկէնը հաղորդեց, որ կայծակ է ընկել մինարէթներից մէկի վրայ, իսկ տ. Օգեանը աւելացրեց, որ Գաղբէքէօյի և Հայդարփաշայի մէջտեղ փոթորիկը մի ահագին ծառ է տապալել: Այս բոլորի առթիւ Գուրգէն էֆ. մի մի զաւեշտական նկատողութիւն արեց, մինչև որ յայտնեցին, թէ ճաշի սեղանը պատրաստ է:

Գուրգէն էֆէնդին Արմենակի թևը մտնելով, առաջնորդեց ճաշասրահը, ուր սեղանի վրայ տեղի ունեցած զրոյցների շնորհիւ, ճաշը շատ զուարճալի անցաւ: Բէկեանը պատմեց թէ Կովկասեան և թէ ուսանողական կեանքից զանազան նորութիւններ, պատմեց նաև թէ ինչպէս հարուստ ուսանողները յաճախում են համալսարան ոչ թէ գիտութիւններ սովորելու, այլ այդ պատրուակով միշտ հեռու մնալու ծնողների աչքից, անսանձ հաճոյքներին բաւականութիւն տալու համար. իսկ սրա հակառակ, թէ ինչպէս աղքատ ուսանողները գոհացուցիչ տարրական պէտքերից անգամ մեծ մասամբ զուրկ լինելով հանդերձ, այնուամենայնիւ ձգտում են հասնել իրենց բարձրագոյն նպատակին: Ապա խօսքը դարձաւ իւր վրայ: Բէկեանը պատմեց իւր կեանքից մի քանի նշանաւոր դէպքեր. ասաց,

թէ ինքը հօր երեսը չի տեսել. թէ հայրը վախճանուել է իւր աշխարհ գալուց շատ առաջ, իսկ մայրը, այդ ծանր կորուստը տանել չը կարողանալով, թողել ու տեղափոխուել է ուրիշ քաղաք։

—Չը գիտեմ, թէ մայրս ինչպէս էր կարողանում իւր մատների աշխատութեամբ պահպանել իմ և իւր գոյութիւնը,—աւելացրեց Արմենակը,—սակայն երբ ես եօթ թէ ութ տարեկան էի, անշպասելի կերպով մի ժառանգութիւն ստացանք, թէև այդ առասպելական կտակի մասին մայրս ինքն էլ որոշ ոչինչ չը գիտէր...

—Մեծ էր արդեօք այդ գումարը, հետաքրքրութեամբ հարցրեց Գուրգէն էֆէնդին։

—Ես կտակած գումարի քանակութեան մասին ոչինչ չեմ կարող ասել, որովհետև այն ժամանակ շատ փոքր էի, բայց գիտեմ, որ մայրս այդ գումարի մի շատ չնչին մասն է վերցրել, իսկ մնացածը նուիրել է բարեգործական նպատակների, որոնց մասին չի սիրում խօսել...Չի սիրում խօսել նաև հօրս մասին, որովհետև, լոկ նրա մի յիշատակը բաւական է, որ օրերով տխրի, տառապի։

Արմենակը մի փոքր շունչ առնելուց յետոյ, առանձին պարծենկոտութեամբ շեշտեց.

—Այո բոլորից յետոյ պէտք է ասեմ, որ մայրս գերբնական աշխատութիւն է գործ դրել իմ դաստիարակութեան ու կրթութեան վրայ։

—Կարծեմ ասացիք, որ Պարիզ էք գնում, հարցրեց Գուրգէն էֆ.

—Այո, գիմնազիան աւարտելուց յետոյ, մօրս հետ գնացինք Մոսկուայ, ուր մտայ Համալսարան, բայց նոր փոխուել էի երրորդ կուրսը, երբ պատահեց այնտեղ մի դէպք, որն անկարելի դարձրեց ինձ մասնագիտութիւնս շարունակելու։ Ստիպուած եղայ թողնելու և այժմ մտադիր եմ շարունակելու Պարիզում։

—Ցաւալի է, կրկնեց Գուրգէն էֆ. մի առանձին մտազբաղութեամբ և զննելով Արմենակի դիմագծերը, որ շատ նման էր թէ իրենին և թէ Զաբէլի դիմագծերին, աւելացրեց.

—Ուրեմն բաղդ չէք ունեցել ձեր հօր երեսը տեսնելու։

—Ոչ էլ նա բաղդ է ունեցել իմս տեսնելու... սակայն մայրս ինձ համար եղել է ամեն ինչ։

—Ի՞նչպէս է կոչւում ձեր տիկին մայրը։

—Աննա...

Գուրգէն էֆ. դէմքի տխրութիւնը մասամբ փարատուեց, բայց երևում էր, որ նրա սրտում թաղնուած էր ինչ-որ հեռաւոր յիշատակի զգացում, որ երբեմն զարթնելով, տանջում էր նրան։ Արմենակի արած պատմութիւնը զարթեցրել էր հենց այդ յիշատակը, սակայն օտարերկրացի հիւրի

առաջև տխուր չերևելու համար, աշխատում էր խեղդել իւր մէջ անցեալին վերաբերող յիշողութիւնները։ Այդ պատճառով էլ ճաշը վերջացնելուց յետոյ, երբ մտան դահլիճ թրքական սուրճ խմելու, նա դարձաւ աղջկան.

—Զաբէլ, դու այսօր մի տեսակ ես երևում, կարծես չես ուզում մասնակցել մեր թանկագին հիւրին զբաղուեցնելու գործին...

—Ես չուզեցի ձեր հետաքրքիր զրոյցն ընդհատել, հայր, պատասխանեց օրիորդը աշխոյժով։

—Շնորհակալ ենք... և խնդրում ենք, որ դաշնամուրիդ վարագոյրը բանալով, մի փոքր խօսեցնել տաս։

Զաբէլը շառագունելով անցաւ դաշնամուրի առաջ։ Մի վայրկեան տան մէջ տիրեց խոր, անթափանց լռութիւն։ Լսւում էր միայն վճիտ ապակուն զարկուող ճանճի բզզոցը և նախասենեակի պատից քարշ արած ժամացոյցի միակերպ թիկ թակը։ Ամենքն էլ նայում էին օրիորդին, որ նոտայի գիրքն էր թերթում։ Արմենակին թւում էր թէ դաշնամուրի առաջև նստածը ճարտար արձանագործի ձեռքով կերտուած մի հրաշալի կիսարձան է։ Վերջապէս օրիորդը բարձրացրեց ձեռքերը. դալար մատները սահեցին ստեղունների վրայով և լռութիւնը վրդովուեց նախ ցածից դէպի բարձր և ապա բաձրից դէպի ցած ալիքի նը-

ման ողորկ և եթերքի նման թրթռուն ձայնով։ Մի քանի բեկբեկուող, բայց քաղցր տընկ-տընկոց ևս և կրկին թագաւորեց նոյն լռութիւնը։ Արմենակի երակներով անցաւ մի խտղեցուցիչ սարսուռ, իսկ ականջներում դեռ հնչում էր դաշնամուրի լարերի քաղցր հնչիւնը։ Բայց այս անգամ լռութիւնը շատ կարճ տևեց, դաշնամուրը կրկին որոտաց և որոտման արձագանքը դեռ չը մարած, նա աստիճանաբար ցածացաւ, իջաւ վար, շատ վար, մինչև որ նուաղեց նրա լարերի մէջ, իւր ետև թողնելով միայն մի շատ անոյշ գիծ, որ շատ նման էր քաղցր յիշողութեան։ Ապա՝ նա նուագեց Բեթհովենի մեղեդիներից մէկը այնքան տխուր, այնքան մելամաղձոտ, որ կարծես թէ անշունչ լարերը արտասուում լինէին։

Արմենակն ինքն իրեն կորցրել էր. նրա ականջին հասնում էր լարերի հնչիւնը, նա տեսնում էր օրիորդի մատների պարը ստեղունների վրայ, բայց յափշտակուած էր իրեն անծանօթ մի հեշտալի զգացմունքով։

Մեղեդիից յետոյ օրիորդը նուագեց նաև մի քանի եւրոպական պարեր, ապա ասիական եղանակներ. բայց երբ սկսեց Համիդիէ քայլերգի նախերգանքը, Գուրգէն էֆ. վերթռաւ տեղից.

—Թող այդ, Զաբէլ, այդ քայլերգը ոչ մի հայի դաշնամուր և հայ տան չը պիտի նուագուի,

ասաց նա։

Օրիորդը հնազանդեց։ Նա մի փոքր շունչ առնելուց յետոյ, եղբօր հետ մի քանի անլսելի խօսքեր փոխանակեց։ Բաբկէնը մօտեցաւ դաշնամուրին։ Զաբէլը նուագեց մի բոլորովին նոր, Բէկեանին անծանօթ եղանակ, երբ Բաբկէնն էլ երգեց.

«Երբ որ մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը նրան մի սրած
Դաշոյն պիտի տայ ընծայ»...

Այդ եղանակի ու երգի թողած տպաւորութիւնը Արմենակի վրայ աւելի քան զօրեղ էր, այնպէս որ երբ օրիորդը վերջացրեց, նա սկսեց ոգևորուած ծափահարել։

Զաբէլի վարդագոյն թշերն աւելի ևս կարմրեցին և նա իւր ներքին ամբոխմունքը ծածկելու մտքով ասաց.

— Ես չափազանց սիրում եմ այս երգը, որովհետև նա սրտիս շատ մօտիկ է... Եթէ հայ-հայրերն ու հայ-մայրերն այս հոգով կրթած, մեծացրած լինէին իրենց որդոց, հաւատացած եմ, որ շատ բան այնպէս չէր դառնայ, որպէս դառնում է այժմ. օրինակ թուրք սպաները չէին համարձակուիլ հայի անունը նախատինքով արտասանելու և հայ կնոջ պատիւն արտաւորելու այնքան անպատիժ կերպով։ Զէնքը ոյժ է, իսկ ոյժը՝ իրաւունք։

— Այդ մասամբ միայն ճիշտ է, նկատեց Գուրգէն էֆ. և աւելացրեց. — սակայն միմիայն բարոյական կրթութիւնն է, որ հասցնում է մարդուն իւր կոչման բարձրութեանը, որ հասցնում է ինքնաճանաչութեան, ինքնապաշտպանութեան... Նա զսպում է մարդու կրքերը և զարթեցնում է քնած զգացումները... նա սովորեցնում է՝ թէ ե՞րբ, ո՞ր դիպուածում պէտքէ սուր հանել կամ ե՞րբ պատեանը դնել... Աւազակները գիշեր ու ցերեկ սուր են կրում, բայց չարիքից բացի մարդկութեան որևէ բարիք հասցրած չեն... Զէ՞ որ սուր էին կրում ձեզ շոգենաւում անպատուող սպաները, սակայն քանի՞ փարայ արժէին նրանց սրերը... Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թէ զէնքը ոյժ է, իսկ ոյժն իրաւունք—այդ արդէն հին երգ է...

— Հի՞ն երգ է, հայր, այժմ արդեօք նոյնը չէ՞...

— Ո՛չ... Եթէ այդպէս լինէր, եթէ տիրապետողը լինէր զէնքը և ոյժը, այն ժամանակ զինուած ուժեղները միմիանց կոտորելով, կը ջնջուէին, մնալով մի կամ մի քանի ուժեղներ միայն։

— Իսկ դուք, պ. Բէկեան, դուք ինչ կարծիք ունիք այս հարցի մասին, հարցրեց Զաբէլը։

— Ես համաձայն եմ ձեզ հետ, որ զէնքն ոյժ է, իսկ ոյժն՝ իրաւունք և թէ այդ բացարձակ իրաւունքով այժմ ապրում են մի կամ մի քանիսը մի-

այն, այնինչ մնացածները զինաթափ եղած գերիներ են, որոնք ապրում են ուժեղների համար։

—Հասկանում եմ ձեր ասածը. ասաց Գուրգէն էֆէնդին տեղից ելնելով։

—Իսկ աւելի հասկանալի դարձնելու համար կաւելացնեմ, որ ամեն մի պետութեան մէջ մի կամ մի քանի հոգի են ապրում, մնացածները միմիայն շնչում են։

Այս ասելով վեր ելաւ և Արմենակը։

—Պատրաստուում էք գնալու, հարցրեց օրիորդը։

—Ձեր հայրը նոյնպէս պատրաստուում է գընալու։

—Ա՛խ, իմ բանն ուրիշ է. ես գործի մարդ եմ, իսկ դուք ազատ... Զաբէլ, ինչպէս չեմ սիրում քո այդ հարիմական ընաւորութիւնը... Ա՛ռ պ. Բէկեանին և իջէք պարտէզ. այնտեղ զով է և օդը թարմ։ Ինձ պէտքէ ներէք, որ՝ հակառակ ցանկութեանս, չեմ կարող մասնակցել ձեր զբօսանքին. ինձ մի տեղ սպասում են։ Եղանակը խիստ շոգ է այսօր, պ. Բէկեան, ձեզ խորհուրդ կըտայի հետևել Զաբէլին, աւելացնելով, որ քանի այստեղ էք, որքան յաճախ գաք մեզ մօտ, այնքան մեծ պատիւ արած կը լինէք և այնքան մեծ հաճոյք պատճառած։

—Իսկ կիրակի օրը անպատճառ պիտի գնանք

Բէօյուկ-Դարէ, մէջ մտաւ Զաբէլը։

—Անպատճառ. և այդ հարցն արդէն վճռուած է։

Ու կրկին ներողութիւն խնդրելով, դուրս ելաւ։ Հօր ետևից դուրս գնաց և Բաբկէնը։

VI

Սպարանքի առաջև, դէպի Արևելք, բացուում էր մի ընդարձակ պարտէզ, որը վերջանում էր Բոսֆորին նայող մի քարափով, մօտ յիսուն մետր վեր ջրի մակերևոյթից։ Այնտեղից դէպի յետ, տարածուում էր քաղաքը—Պէրա, Բանկալթի, մինչև Ոսկեղջիւրի աջ ափի վրայ գտնուող քաղաքամասերը. դէպի աջ՝ մինչև սև ծովի ափերը գրկող թէ ասիական և թէ եւրոպական լեռների անտառախիտ ալիքները. դէպի ձախ՝ պատմական Բիւզանդիոնը, տեղաւորուած Ոսկեղջիւրը, Բոսֆորը և Մարմարականը միմիանց հետ խառնուող կորանկիւնի վրայ, իւր բազմաթիւ մինարէթներով. իսկ առաջևից՝ ասիական Կ. Պոլսոյ մի մասը, իւր արուարձաններով—Սկիւտարը, Հայդարփաշան Գադը-քէօյը, Իշխանական կղզիների շարքը, իսկ սրանց յետև Բուրսայի լեռնաշղթան, թաղուած մի տեսակ բաց մոխրագոյն մշուշի տակ։

Տեսարանը հրաշալի էր։ Կեանքը եռում էր։

Աշխատաւոր մրջիւնների նման նեղուցը աջ ու ձախ ակոսում էին հսկայական շոգենաւերը, հարիւրաւոր մեծ ու փոքր առագաստանաւեր և հազարաւոր նաւակները։

Պարտիզի ոտքերի տակ, Բոսֆորի եւրոպական ափին, երևում էին Դոլմա-Բախչէի, Զրաղանի և Բէշիկթաշի մարմարեայ պալատները, զանազան խոշոր ապարանքներ, դեղնագոյն զօրանոցներ և մզկիթները, իրենց սրածայր բարձր մինարէթներով, բոլորն էլ շրջապատուած կանաչ ծառերով և քողաւորուած Բոսֆորի թափանցիկ գոլորշիով։

—Սուլթանները մօլուրթիւն ունին պալատներ կառուցանելու,—ասաց Զաբէլը, երբ նրանք մօտեցան քարափի բերանին ընկած ցանկապատին.—իւրաքանչիւր մի սուլթան իւր համար առանձին պալատ է կառուցանում։

—Համիդը նոյնպէս նո՞ր է կառուցել։

—Այո՛... նա այստեղից մօտ է, մի քիչ ձախ, Բէշիկթաշի բարձունքի վրայ... ես չեմ տեսել, բայց պատմում են, որ նա թէև իւր ճոխ ճարտարապետութեամբ չի կարող պարծենալ, բայց աւելի շատ փող է նստել։

—Իսկ ո՞վքեր են նստում այդ պալատների մէջ։

—Շատերը դատարկ են, մի քանիսի մէջ էլ մեռած սուլթանների կանայք են փակուած։

—Զարմանալի կեանք է.

—Անխորհուրդ, զուտ անասնական կեանք, աւելացրեց Զաբէլը։

Նրանք մտան պարտիզի խորքը. ամեն տեղ փայլում էր կարգ ու մաքրութիւն։ Նեղ և ոլորապտոյտ ծառուղիների երկու եզերքում բացւում էին եղանակի յարմար զանազան գոյնի ծաղիկներ։ Նրանք զանազան կողմից գալով, միանում էին կենդրոնում, մի բոլորակ ու հարթ տարածութեան վրայ, յատակը ծածկուած կարմիր աղիւսի աւազով։ Այդ տարածութեան մէջտեղում շինուած էր մարմարեայ մի աւազան, որի մէջտեղից միշտ վեր էր զարկում ականակիտ ջրի շադրուանը և անձրևի կաթիլների նման թափւում էր ցած, վերադովելով ջրի խաղաղ մակերևոյթը, ուր լողում էին բազմաթիւ ոսկի ձկնիկներ։

Նրանք նստեցին աւազանի շուրջը դրուած նստարաններից մէկի վրայ, ծառի ստուերի տակ։ Այդ միայնութիւնը, այդ առանձնութիւնը երկուսի սրտին էլ մօտիկ էր։ Գուցէ սրտով էլ փափակած լինէին այդ հանդիսաւոր բոպէին և մտածած, թէ ի՞նչ պիտի ասեն միմիանց, ի՞նչպիսի բառերով, որոնք կարողանային փոխադարձ զգացումների թարգման հանդիսանալ։ Բայց այժմ, երբ վրայ էր հասել այդ փափակելի բոպէն. նրանց զրոյցը այնքան անկապ էր անցնում, որ իւրաքանչիւրը նրանցից իրեն էր վերագրում այդ անյաջողութիւնը։

Այդ բանը կատաղեցնում էր մանաւանդ Զաբէլին։ Նա չէր ուզում ակամայ արդարացրած լինել հօր կարծիքը, չէր ուզում հարեմական երեւալ, որպիսին չէր իսկապէս. բայց բնական ամօթխածութիւնը, — որ միեւնոյն ժամանակ կազմում էր նրա ազգային յատկանիշներից մէկը, — և դէպի Արմենակը ունեցած բուռն համակրանքը, մի տեսակ կաշկանդում էին նրան։ Նա ուզում էր խօսել, զբաղեցնել հիւրին և խօսում էր եղանակի գեղեցկութեան մասին, շրջապատող տեսարանների և նրանց պատմական նշանակութեան մասին... Նրա խօսքերն իսկապէս քաղցր տպաւորութիւն էին թողնում Արմենակի վրայ և թւում էր թէ իւր ականջի տակ լսում է դեղձանիկի դայլայլիկը։ Սակայն օրիորդը գոհ չէր. համոզուած լինելով, որ ինքը իւր զրոյցներով իւր երեխայութիւնն է միայն ցոյց տալիս։

Նոյնը մտածում էր և՛ Արմենակը ու հետևելով ինչ-որ փիլիսոփայի խորհրդին, աւելի լսում էր, քան խօսում, որովհետև լսողը աւելի ազատ է ծաղրելի լինելուց, քան խօսողը։

Օրիորդը յանկարծ ընդհատելով մի խօսակցութիւն, որ՝ իւր կարծիքով, զբաղեցուցիչ չէր, վերթռաւ, մի հատ ծաղիկ պոկեց և Արմենակին դառնալով, հարցրեց.

—Ձեր Կովկասումն էլ բուսնո՞ւմ են այսպի-

սի սիրուն ծաղիկներ։

Ու ծաղիկը տուեց նրան։

Արմենակն առաւ, նայեց, հոտ քաշեց և պատասխանեց.

—Կովկասում ծաղիկներ շատ կան, օրիո՛րդ։

—Եւ այսպէս սիրո՞ւն...

—Աւելի սիրուն, քան այս ծաղիկը։

Օրիորդը մի բոպէ ընկաւ մտածութեան մէջ։ Արմենակին թւաց, թէ նա վշտացաւ, որ Կովկասում աւելի սիրուն ծաղիկներ կան։

—Եւ գուցէ աւելի սիրուն աղջիկնե՞ր... մըտածեց օրիորդը և դարձաւ Արմենակին.

—Այո՛, հայրս եղել է Կովկասում և շատ է գովում, բայց իւրաքանչիւր մի բոյս իւր յատուկ կլիման ունի։

—Իհարկէ ամեն մի կլիմայ իւր յատուկ բոյսը ունի, ուղղեց Արմենակը։

Օրիորդը դարձեալ մտածեց, ապա հարցրեց։

—Ձիշտ այս ծաղկից չը կա՞յ Կովկասում։

—Գուցէ կայ, բայց չեմ պատահել։

—Եթէ լինի էլ, թերևս ուրիշ անուն ունենայ, օրինակ հենց այստեղ հայերէն ուրիշ է, թուրքերէն՝ ուրիշ... բայց թուրքերէնը աւելի խորհրդաւոր է... Դուք սրա անունը չը գիտէ՞ք...

—Ո՛չ, օրիորդ...

—Ափսո՛ս...

Արմենակի մէջ մի տեսակ հետաքրքրութիւն զարթնեց։

Օրիորդը կրկնեց.

—Ափսոս որ չը գիտէք... իսկ եթէ գիտնայիք...

—Ափսոսելու ոչինչ չը կայ, օրիորդ, ասացէք և կը գիտնամ։

—Հենց բանն էլ նրանումն է, որ չեմ ասի։

—Ի՞նչու...

—Որովհետև... չեմ կարող ասել. չի կարող ասել և ոչ մի աղջիկ, եթէ...

—Այն ժամանակ ես կը հարցնեմ ուրիշից։

—Ուրիշից. ո՞ւմնից. դուք այստեղ ծանօթներ չունիք։

—Ա՛յ, օրինակ, ձեր մօրից։

Օրիորդը կամարակապ յօնքերը սեղմելով, նայեց նրան և հարցրեց.

—Իսկ եթէ մայրս ուզենայ գիտնալ, թէ ո՞վ տուեց ձեզ։

—Տէր Աստուած, այստեղ հո՛ մի գաղտնիք չը կա՞յ. կասեմ, որ դուք տուեցիք։

Մ՞օրս... Աստուած չանի, արգելեց Զաբէլը բարեկամական յանդիմանութեամբ։

Արմենակի հետաքրքրութիւնն աւելի ևս սաստկացաւ. նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու արգելուած էր օրիորդներին կրկնելու այդ

ծաղկի անունը կամ ինչու կարելի չէր ասել մօրը, թէ ծաղիկը տուել է իւր աղջիկը։ Եւ օրիորդին նեղը լծելու համար ասաց.

—Իմ հետաքրքրութիւնս այնքան լարեցիք, որ անպատճառ ուզում եմ իմանալ այս ծաղկի անունը և հենց հիմայ կը հարցնեմ ձեր մօրից։

Ու վեր ելաւ տեղից աւելացնելով.

—Եթէ չէք ուզում, որ ուրիշից հարցնեմ, դուք ասացէք։

Օրիորդը շառագունեց, բայց սիրտ առնելով ասաց.

—Այդ ծաղիկը կոչւում է... սէվդա չիչէյի։

—Որ թարգմանի սիրոյ ծաղիկ, վրաբերեց Արմենակը խորհրդաւոր ժպիտով։

Զաբէլը ամօթից շփոթուած՝ ձեռքը դրեց Արմենակի բերանին։ Այդ անակնկալ հպաւորութիւնը էլէքտրական հոսանքի նման անցաւ նրա երակներով և այդ տպաւորութեան տակ ասաց.

—Սքանչելի ծաղիկ է, սիրուն տեսքով և քաղցր համ ու հոտով... անունն էլ խիստ յարմարում է իրեն... ճիշտ որ սիրոյ ծաղիկ, որի իւրաքանչիւր մի թերթիկի տակ սէր է ննջում ու սէր բուրում... Բայց սա աւելի սիրուն է երևում ինձ այն պատճառով, որ ձեր ձեռքից ստացայ։

Զաբէլն աւելի ևս շփոթուեց ու նրա դէմքը ծածկուեց վարդի կարմրութեամբ։ Արմենակի սուր

թափանցող նայուածքից չը խուսափեց օրիորդի դէմքի այլայլումը. նա արդէն գուշակում էր, որ նրա ներսը փոթորիկ է կատարւում։

—Որքա՜ն գեղեցիկ ու պաշտելի է, կրկնեց նա իւր մտքում, առանց աչքը նրանից հեռացնելու։

—Կիրակի օրը դուք էլ կը գա՞ք Բէօյուկ-Դարէ, խօսքը փոխելով, հարցրեց օրիորդը։

—Անպատճառ, եթէ եղանակը լաւ լինի, իսկ դո՞ւք, օրիո՛րդ։

—Ե՞ս... չը գիտեմ. այդ կախուած է հանգամանքներից։

—Ոչ մի պատրուակ. ցանկալի է, որ դուք անպատճառ գաք, այլապէս...

—Մ՚թթէ առանց ինձ կարելի չէ, հարցրեց նա չարաճճի ժպիտով։

—Ամեն ինչ կարելի է, բայց կարելիների մէջ էլ տարբերութիւն կայ։ Ա՛յ, օրինակ, ես էլ կարող էի այստեղ նստել առանց ձեզ, բայց այն հաճոյքը չէի զգալ, ես էլ կարող էի կռանալ, պոկել այս սիրոյ ծաղկից ու հոտ քաշել, բայց սա չէր ունենայ այն համն ու հոտը...

—Օ՛հ, լաւ, լաւ, տարօրինակ մարդ էք, անճանաչելի։

—Անճանաչելի՞...

—Այո՛... երեկ առաջին անգամ երբ տեսայ ձեզ շոգենաւում, լրագրի վրայ թեքուած, անցաւ մըտքովս «Ինչ սառն, ինչ սնտարբեր երիտասարդ է» և մէջս սառուցային ցրտութիւն զգացի. յետոյ երբ տեսայ իմ և այն լիկտի սպայի մէջտեղ կանգնած, ահարկու դէմքով և յուզումից ցնցուող շրթունքով, ասացի, «ահա՛ մի սառն բնաւորութիւն, որ կարող է կրակ կտրել, մի խաղաղ սիրտ, որ ընդունակ է ովկիանոսի նման յուզուելու», իսկ այժմ...

Օրիորդը կարծես զգալով, որ իւր խոստովանութիւնների մէջ շատ առաջ գնաց, յանկարծ ընդհատեց խօսքը։

Արմենակը հարցրեց.

—Այժմ ի՞նչպէս էք տեսնում, օրիո՛րդ։

—Այժմ յուզուած ալիքները տափակել են և փոթորկալից գոռ ու գոչումի տեղ, ինչ-որ քաղցր ու թովիչ բանաստեղծութիւններ են մրմնջում... Ի՞նչպէս ուրեմն ճանաչել մարդուս սիրտը։

—Շատ դիւրին կերպով։

—Օրինակ...

— Որպէս օրինակ կը բերեմ ինքս ինձ. ահա՛։ Ասում էք, որ ես սառն ու անտարբեր էի.—այդ պէտք է բացատրել նրանով, որ առաջին անգամն էի ձեզ տեսնում, ձեր ո՞վ և ի՞նչ լինելը չը գիտէի և մեր մէջ ոչ մի առնչութիւն չը կար։ Ասում էք, որ ես՝ սառն ու անտարբերս, յանկարծ բռընկեցի, յուզուեցի։—Այդ էլ պէտք է բացատրել նրանով, որ այն րոպէին կատարւում էր մի ապո-

ընի գործ, որ արիւնակիցս էր անպատուում, որ թոյլն ու անզօրը ենթարկւում էր բարբարոսական բռնութեան հալածանքին, երբ կարելի չէր լուռ հանդիսատես լինել։ Գանք երկրորդ կէտին, այնէ —թէ ինչպէս նախ՝ սառն, անտարբեր, ապա՝ յուզուած, փոթորկած սիրտը քնքշացել է... Գիտէք օրիորդ, ինչ զգայուն տարրերից է բաղկացած սիրտը. նա կարծես զգացումների աղբիւրն է... Ուրեմն նա, այդ սիրտը կարող է սառն, անտարբեր մնալ կամ յուզուել, փրփրել այն ժամանակ, երբ նրա շուրջը ամեն ինչ սէր ու քնքշութիւն է բուրում. կարող է նա չը զարթնել և թովիչ ու քաղցր բանաստեղծութիւններ չը մրմնջալ...

Օրիորդը ձեռքերը կրծքին խաչած լուռ յափշտակութեամբ լսում էր այն բառերը, որոնք սթափեցուցիչ կաթիլների ներգործութիւն էին անում նրա անապական սրտի վրայ։

Մի քանի րոպէ այնպէս լուռ կանգնելուց յետոյ, ասաց.

—Հա՛, մի բան պիտի հարցնեմ։ Երեկ երբ կանգնած էիք իմ և սպաների մէջտեղ, ես նկատեցի, որ դուք ձեր գրպանից դուրս հանեցիք փոքրիկ վեցհարուածեան ատրճանակը։ Ի՞նչ էիք մտածում անել։

—Այդ ինքս էլ չը գիտեմ. բայց պէտք է անէի այն, ինչ որ անհրաժեշտ էր, ինչ որ հանգամանքները կը թելադրէին։

—Ահա՛ տեսա՛ք, որ զէնքը լաւ բան է, թէև հայրս հակառակ է այդ բանին։

—Ձեր հայրը նոյնքան իրաւունք ունի։ Զէնքը կրթուած, ինքնաճանաչ և պարտաճանաչ մարդու ձեռքում այն չէ, ինչ որ է մի անկիրթ, վայրենի մարդու ձեռքում։ Ես զէնքի օգնութեան կը դիմէի այն դէպքում, երբ նա ներկայանար որպէս մի անխուսափելի պահանջ և երբ խիղճս արդարացնէր այդ քայլը։

—Ես էլ այդպէս եմ կարծում և հենց այդ անխուսափելիութիւնն էր, որ ստիպեց ինձ հովանոցը սպայի գլխին փշրելու... Հաւատացէք, եթէ զէնք ունենայի, կը գործածէի անվախ կերպով։

—Իսկ ես էլ հաւատացնում եմ ձեզ, որ միմիայն դրանով դուք դրաւեցիք ինձ. ասաց Արմենակը ժպտալով։

Զաբէլն այս անգամ թեթևակի միայն կարմրեց և խօսքը փոխելով, հազիւ լսելի ձայնով կրկնեց.

—Զը մոռանաք, որ մօրս կարելի չէ ասել։

—Ի՞նչ կարելի չէ ասել, օրիորդ։

—Որ այդ ծաղիկը ես տուի ձեզ... առայժմ կարելի չէ...

Արմենակը խոստացաւ։ Նրանք զրոյց անելով մօտեցել էին պատշգամբին։ Կառքը պատրաստ

կանգնած էր, և տ. Օգեանը հիւրին ճանապարհ ձգելու համար իջնում էր ցած։ Արմենակը սիրոյ ծաղիկը զգուշութեամբ թաղցրեց բռան մէջ և սրտագին շնորհակալութիւն յայտնելով, կառքը մտաւ։

—Շուտ շուտ եկէք, ձայն տուեց Զաբէլը, երբ կառքն առաջ սլացաւ։

VII.

«Սիրոյ–ծաղիկ»...

Վերադառնալով հիւրանոց, ծանր աշխատանքից յոգնած, վաստակած մարդու նման Արմենակը պառկեց անկողնի վրայ։ Վերարկուն մի կողմն էր շպրտել, գլխարկը՝ միւս։ Բայց սիրոյ-ծաղիկը, որպէս սրբութիւն, դեռ բռնած ունէր ձեռքում և միշտ կրկնելով նրա անունը, մօտեցնում էր քթին, շրթունքին։ Միայն նրան թւում էր, թէ այդ ծաղիկն այլևս չունէր նոյն համն ու հոտը, նոյն գեղ ու գեղեցկութիւնը, որպէս առաջ, երբ ինքը դեռ նստած էր Զաբէլի կողքին։

Զաբէլը նոյնպէս անհանգիստ էր։ Բէկեանին ճանապարհ ձգելուց յետոյ, նա ուրախ-ուրախ մըտաւ տուն և ձեռքն առաւ ձեռագործը իւր սըրտի քաղցր խոկումներին անձնատուր լինելու մըտքով։ Նրան թւում էր, թէ կատարուել է այն գերբ-

նական բանը, թէ յայտնուել է այն անծանօթը, որին ձգտելիս է եղել իւր սիրտը. թէ այլևս իրեն ուրիշ բան չի մնում անել, եթէ ոչ հրճուել, հիանալ այդ գտած, յայտնուած անծանօթ բանով։ Էլ ոչ մի գաղտնի անհանգստութիւն, ոչ մի սրտի անծանօթ ճմլում, ոչ մի մղում դէպի անյայտը, անհասկանալին... Ու ձեռքն առաւ ձեռագործը այն յուսով, թէ մի ժամում տասն օրուայ գործ պիտի կատարի։ Բայց Զաբէլը հենց առաջին իսկ վայրկեանից զգաց, որ սխալւում է, որ իւր մէջ ինչ-որ աւելի ուժեղ և աւելի անհասկանալի փոթորիկ է կատարւում, որ ինքը ոչ միայն չի կարողանում ասեղ շարժել, այլև անկարող է չորս պատերի մէջ սեղմուել, որոնք կարծես ուզում էին ճզմել իրեն։ Օգն էլ ծանր ու խեղդիչ էր թւում. նա ազատ շունչ առնելու պէտք էր զգում։ Եւ մի կողմ շպրտելով ձեռագործը, իջաւ ցած, դէպի պարտէզը։ Այստեղ օդը ազատ ու մաքուր էր։ Նա նայեց շրջապատող լեռների կատարներին, ծառերի սաղարթներին, Բոսֆորի ալիքներին, որոնք ամենքն էլ ներկուած լինելով վերջալուսի դեղնագոյն ճառագայթներով, մի հանդիսաւոր տեսք էին ընդունել։ Մտաւ պարտէզը, անցաւ այն շաւիղներով, որոնցով անցել էր Արմենակի հետ միասին, կանգնեց այնտեղ, ուր կանգնել և դիտել էին Բոսֆորի հրաշալի տեսա-

բանները։ Տեղի ունեցած բոլոր խօսակցութիւնները, զրոյցները մի առ մի յիշեց նա և՝ վերջապէս, նստեց այն նստարանի վրայ, ուր նստել էին կողք կողքի։ Շադրուանը դեռ վեր էր զարկում. ջրի մանր կաթիլները նոյն կարգով թափւում էին աւազանի մէջ, իսկ ոսկի ձկնիկները խաղ էին անում թափուող կաթիլների հետ։ Հիւսիսային քամին դեռ փչում էր նոյն հոսանքով և ծառերը սոսափում էին, տերևները գրկւում համբուրւում, կարծես միմիանց բարի գիշեր մաղթելիս լինէին։ Ահա այնտեղից ինքը պոկելով Սէվդա-չիչէին, տուել էր Արմենակին։ Կտրուած ոստը, մեռած կմախքի նըման, դուրս էր ցցուած և նրա ծայրին անդամանդի նման փայլում էր մի կաթիլ ջուր... Զաբէլին թւաց թէ դա գլխատուած ոստի արտասուքն է և սարսռաց։ Իսկ այն միւս ծաղիկները, որոնք շրջապատել էին կտրուած, լացող ոստին։ Զաբէլի մտքով անցաւ, թէ նրանք էլ գլխիկոր ողբում են իրենց գլխատուած քրոջ վրայ ու սիրտը վշտացին սեղմուեց։

Այս բոլորը թւում էր նրան. թւում էր նաև շատ բան ու անցնում, ցնդում առանց հետք թողնելու...

Բայց առաջ այդպէս չէր, օրինակ, մի ժամ առաջ այդպէս չէր...

—Ի՞նչու բնութիւնը տգեղ է, արևի լոյսն

այսպէս կարմիր։ Ինչու՞ առարկաները կորցրել են իրենց գեղեցկութիւնը, ծաղիկներն իրենց անոյշ բուրմունքը։ Ի՞նչու չը կայ կեանք, կենդանութիւն, գրաւչութիւն... մրմնջաց նա։

—Որովհետև մենակ ես, կողքիդ չի նստած Արմենակը։

Այս ձայնից նա ցնցուեց, վեր թռաւ և ձեռքը բաբախող սրտին սեղմելով, նայեց շուրջը։

Ոչ ոք չը կար. շադրուանն էր, որ աղմկելով զարկում էր վեր. ծառերն էին, որ սոսափում էին ու թռչնիկները, որ երգում էին իրենց օրամտի քաղցր մեղեդին։ Նա միւս ձեռքն էլ սեղմեց կրծքին, այն անսովոր կերպով բաբախող կրծքին, որտեղից լսուել էր իւր հարցի պատասխանը։

Եւ երկու երիտասարդների համար օրերն անցնում էին այս կարգով։ Արմենակը միշտ յաճախում էր Օդեաննների տունը, նրանք միասին գնում էին զբօսնելու, գնում էին թատրոն, երեկոյթ և այլն, բայց ամեն անգամ, երբ բաժանւում էին, իւրաքանչիւրն իւր կարգում խոստովանում էր, որ այսօր երեկուանից աւելի բուռն է այն անծանօթ ծարաւը, աւելի մեծ ու խոր-դատարկութիւնը։

Ու անցկալի անհամբերութեամբ սպասում էին կիրակի օրուան, երբ միասին Բէօյուկ-Դարէ պիտի գնային, եթէ եղանակը արգելք չը դառնար։

Այդ օրից նրանք շատ բան էին սպասում...

Եւ վերջապէս սպասած կիրակին վրայ հասաւ։ Օրը սպասածից պարզ ու գեղեցիկ էր։

Դէթ այսպէս էր թւում երկու երիտասարդներին։

Կիրակի օրը, առաւօտեան ժամի տասից առաջ, նրանք իջան կամուրջը և տասին մօտ մեկնող շոգենաւը մտան։ Շոգենաւը սուլեց, կիսալուսինը ծածանեց բարձր կայմի վրայ և կապանքները արձակելով, նաւը մի կոր գիծ կազմեց և մըտաւ Բոսֆորի ջրերի մէջ։

Հիւսիսից փչում էր սառն քամի, բայց չը նայելով դրան, Զաբէլն ու Արմենակը բարձրանալով վերի յարկը, կանգնել էին տախտակամածի վրայ։ Մոյգ ֆիրուզայի գոյն ջուրը հեշտալի շառաչիւնով ճեղքելով, շոգենաւն առաջ էր լողում, իւր ետև թողնելով երկու անիւների, տակ ջարդուած, փշրուած զուգահեռական մի զոյգ գիծ։ Գծերը աստիճանաբար հեռանալով, նմանում էին տեղ-տեղ արևի ոսկեգոյն ճառագայթներով ոսկեզօծուած երկայն ժապաւէնների։

Շոգենաւը սուլելով ու տնքալով միշտ լողում էր առաջ, որը ասիական և եւրոպական եզերքների մի քանի նաւամատոյցներին հանդիպելուց յետոյ, վերջապէս կանգ առաւ Բէօյուկ-Դարէի կայարանի առաջև։

Բէօյուկ-Դարէն թրքական մայրաքաղաքի սի-

րուն արուարձաններից մէկն է, Բոսֆորի թագուհին։ Նա ընկնում է Սև ծովին մօտ, եւրոպական ափի վրայ, տեղ տալով իւր մէջ դեսպանական ամառնային պալատներին և բարձրաստիճան անձանց ապարանքներին։ Բոսֆորը իւր կապուտակ ու վճիտ ջրով բաց է նրա առաջև։ Ծիծաղուն ալիքները, մանր ու ժպտուն, միշտ խաղ են անում գիշերը՝ լուսնի, իսկ ցերեկը՝ արևի ճառագայթների հետ։ Քուն, դադար չունին, չարաճճի մանուկների նըման, վազում են իրար ետևից, իրար գաւակ թռչում, շփւում, ապտակում են միմիանց և այսպէս գրկախառն թաւալելով դալիս, զարկւում են քարափին և կարծես քրքջալով կրկին փախչում, սուզւում են ալիքների մէջ։ Բայց այնքան քաղցր, այնքան հեշտալի է այդ աղմուկը, որ յափշտակում է մարդուս և թւել է տալիս, թէ գտնւում է Սերովբէ և Քերովբէների մի աստուածային երաժշտական հանդիսում։

Հենց այսպիսի տպաւորութիւն կրեց Արմենակը, երբ ոտք դրեց Բէօյուկ-Դարէի ցամաքի վրայ։

Գուրգէն էֆ. նաւամատոյցի տնակի առաջև կանգնելով, հանդիսաւոր եղանակով դարձաւ իւր ճանապարհորդակիցներին.

—Մեր ծովային ճանապարհորդութիւնը վերջացած է, ասաց նա,—մնում է ցամաքայինը. տեսնում եմ, որ՝ շնորհիւ վեհափառ սուլթանի, այսօր

երկինքը ամպելու և մեզ հալածելու տրամադիր չէ։ Ուրեմն մենք կարող ենք հանգիստ խղճով վճռել մի շատ կարևոր հարց...

—Ա՜խ, դու էլ ճառախօսելու տեղ գտար, արևն այրում է, նկատեց տ. Օգեանը։

—Մի քիչ համբերութիւն և ամեն ինչ կը կարգադրուի, տիկինս։ Դառնամ յարուցածս հարցին, կէս օրին մօտ է, առաւօտը էլանք առանց նախաճաշի, գիտեմ որ ամենքիդ ստամոքսն էլ իմիս նման բողոքում է։ Պէտքէ մի քիչ էլ նրա բողոքին ականջ կախել. սակայն կուզէի քուէի դնել այս հարցը. կուզէք այստեղ, ճաշարաններից մէկում թեթև նախաճաշ անե՞լ, թէ ճաշել պաղ աղբիւրի մօտ, անտառի կանաչ թփերի մէջ։

—Ես ձեռնպահ եմ մնում, որովհետև անծանօթ եմ տեղական կարգերին ու սովորութիւններին, պատասխանեց Արմենակը։

—Իսկ ես, պ. Բէկեանի քուէն էլ առնելով, կասեմ, որ լաւ է ճաշել անտառում, ծառերի զով ստուերի տակ, վրաբերեց Զաբէլը։

—Դո՛ւք, տիկինս...

—Ես մտածում եմ, թէ ինչպէս պիտի վեր ելնեմ այս բլրակի գագաթը, քանի որ արդէն յոգնած եմ և հարթ ճանապարհով դժուարանում եմ քայլել։

—Պատիւ ունեմ զեկուցանելու, տիկինս, որ

վեհափառ սուլթանը դեռ չէ բարեհաճել իւր բարձրագոյն իրադէով հրամայելու, որ կառքի ճանապարհ բացուին, բայց ժողովուրդը դրա միջոցը գտել է, եթէ թոյլ տաք...

—Օրինակ ի՞նչ միջոց...

—Սէանակներ կան թէ արանց և թէ կանանց համար, որոնց վրայ հեծնում են, ոտքով գնալ չը բարեհաճողները։

—Սէանակի՞ վրայ...

—Այո՛... Քրիստոս նրանով Երուսաղէմ գընաց և՝ ինչպէս լսել եմ, Արցախում ահագին համբաւ է վայելում։

—Է՛հ, մի կողմ թող կատակներդ. աւելի լաւ է ոտքով կը գնամ. եզրակցրեց տիկինը։

—Ուրեմն մնում եմ ես քուէս տալու։ Լա՛ւ, ես միանում եմ Զաբէլին, որ պ. Բէկեանի քուէն էլ ունի և ձայների բացարձակ առաւելութեամբ, այն էլ՝ առանց միջադէպի, կնճռոտ հարցը լուծուում է այսպէս — ճաշել անտառի կանաչ թփերի մէջ, ծառերի զով ստուերի տակ և կոյս աղբիւրի եզերքում։

Ու մի քանի անհրաժեշտ կարգադրութիւններ անելուց յետոյ, սկսեցին բարձրանալ դէպի բլրակը։

Այդ բլրակներն ալիքաձև են, ծածկուած խիտ ու կանաչ անտառով։ Նրանք նման են ծովի

հսկայական ալիքների, որ շար ի շար առաջ գալով, Սև և Մարմարական ծովերը բաժանում են միմիանցից։ Նայողին թւում է թէ այդ բլրակները երբևիցէ երկու ծովերի մի մասն են կազմել, թէ եղել են յուզուած ծովի ալիքներ, որոնք ինչ-որ կախարդական գաւազանի հարուածով կամ տիեզերական մի ահեղ շնչով մի ակնթարթում տեղն ու տեղը հող են դարձել, որոնց կատարը ծածկող փրփուրից առաջ է եկել այժմեան սաղարթախիտ անտառները։

Որքան առաջ էին գնում նրանք, այնքան զգալի էր դառնում Հիւսիսից փչող սառը քամին, այնքան օդը թարմանում, քաղցրանում էր, մարդուս թոքերը լցնելով մի ինչ-որ կենարար հեղուկով։ Որքան դժուարին լինէր այդ զառիվեր թափաստանի նեղ շաւիղներով առաջանալը, այնուամենայնիւ այդ դժուարութիւնները Զաբէլին ու Արմենակին առանձին զուարճութիւն էին պատճառում։ Զաբէլը որպէս շաւիղներին վարժ մէկը, գնում էր առաջևից, իսկ Բէկեանը՝ ետևից։ Այդտեղ բնութիւնը վիճելի, քննելի մի գրքի նման բացուած էր նրանց առաջև և որքան նիւթ կար խօսելու։ Ահա բաղեղապատ խոր ու մութ որջեր, ուր կարծես դեռ մարդկային աչք չի թափանցել։ Ահա հաստաբուն կաղնի, գլուխը դոռոզաբար դէպի վեր ցցած որ իւր հսկայական ճիւղերի տակ

խեղդում է հազարաւոր ծառեր ու բոյսեր։ Ահա խոր, ոլորուն ձորակներ, կանաչի մէջ թաղուած, ուր շողին են տալիս նազանքով սահող վճիտ առուակները, որոնք կարծես փափկասուն կուսի շընորհալի իրանը գրկող արծաթեայ գոտիներ լինին...

Արմենակը գնում էր, բայց յափշտակուած տեսարանների հարստութեամբ ու բուսականութեամբ, մոռացել էր և՛ յոգնածութիւն և՛ քաղց և՛ ամեն ինչ։ Ու նայում էր անյագ, անզուսպ նայուածքով. նա աչքերով լափում էր ամեն բան։

Մի տեղ նա յանկարծ կանգ առաւ, որպէս թէ մի անհերևոյթ ձեռք գամեց նրան ու բացականչեց.

—Ահա բնութեան սքանչելիքը, նայեցէք, օրիորդ, այսպիսի բան կարող է ստեղծել ինքը բնութիւնը միայն։

Նրանցից քիչ հեռու գտնուող բարձր բլուրի գագաթից քիչ վար, ճեղքուած ապառաժից դուրս էր բղխում ջուրը, որպէս մի ծորակից և ահագին բարձրութիւնից մեղմ շառաչիւնով գահավիժում էր ցած, ձորակի անդունդը։ Օդի ճնշման տակ վըճիտ ջուրը գնալով սփռւում լայնանում ու մանրանում էր և փոշիանում էր դեռ կէս ճանապարհին չը հասած, ձևացնելով հիւսիսայգի շառաւիղներից մէկը։ Թափուող, փոշիացող ջուրը իւր մէջ ցոլացնելով արևի ճառագայթները, թւում էր թէ նա

բաղկացած է բիւրեղանդ ակունքի և ադամանդների փոշուց։

Այդ փոքրիկ ջրվէժի փոշուց ձորակի մէջ կազմւում է փոքր առուակ և քարերին զարկուելով առաջ է սահում։ Ամօթխած հարսի նման նա երբեմն դուրս է բերում դէմքը և կրկին թագցնում անտառի անթափանց պուրակներում, երբ դու այլևս նրան չես տեսնում, բայց ականջիդ հասնում է մի մեղմ, մի հազիւ լսելի խշշոց։

—Ահա ընութեան սքանչելիքը, կրկնեց նա Զաբէլի ուշադրութիւնը այն կողմ դարձնելով։ Տեսարանը կոյս է ու կախարդիչ։ Տեսնում եմ այդ ադամանդների փոշին և աչքերս խաղում են... Լսում եմ այդ ձայնը և սիրտս լցւում է քաղցր զեղմունքով... Թւում է ինձ, թէ այդ խոր ձորի մէջ, անթափանց պուրակներում մարդկանց երեսից թագնուած հրեշտակներ են ապրում, որոնք երգում են այն Աստուածային քաղցր մեղեդին, որ Արարչի աթոռի առաջև ծունգ չոքած երգել են տիեզերքի ստեղծագործութեան առաջին օրում...

—Ա՜... տեսնում եմ, չափազանց յափշտակուող էք, պ. Բէկեան, մօտենալով, բացականչեց Գուրգէն էֆէնդին, — և իմ դրութեանս մասին չէք էլ հարցնում։

—Ձեր դրութիւնը... ինչ է պատահել Գուրգէն էֆէնդի։

—Երկու դժբաղդութիւն, մէկը միւսից աւելի ծանր... մէկ՝ որ տիկինս յոգնել է և դժուարանում եմ թեւիս կրել նրա ծանրութիւնը, մէկ էլ որ քիչ մնաց, որ աւանակը պիտի գլորուէր ձորի անդունդը, տանելով իւր հետ մեր ճաշի ամբողջ պաշարը։

—Այդ իսկապէս դժբաղդութիւն է, նկատեց Բէկեանը ծիծաղելով։

Իսկ Զաբէլը լրջօրէն հարցրեց.

—Աւանակը ինչու էր գլորւում, հայր։

—Բարեհաճեցէք աւանակից իրենից հարցնել. նա այդ մասին դեռ ինձ բացատրութիւն չի տուել, սակայն հաւանական է, որ հաճելի չէ նրան այն, որ իւր բեռը մենք պիտի վայելենք, իսկ ինքը—ոչինչ։

—Եթէ այդպէս է, այդ աւանակը աւելի խելօք է այն մարդկանցից, որոնք աշխատում են, ուրիշների փորը լցնում, իսկ իրենք միշտ քաղցած են ու քաղցած, նկատեց Բէկեանը։

—Կատակը մի կողմ թողէք. խօսեց տիկինը յոգնածութիւնից հեւալով.—դեռ շատ պիտի գնանք։

—Մի քիչ էլ. ա՛յ մինչև այնտեղ։

Գուրգէն էֆէնդին ցոյց տուեց ծառերով հովանաւորուած մի տափարակ, որ իրենցից շատ էլ հեռու չէր։

Ու շարունակեցին իրենց ճանապարհը։

VIII.

Բէօյուկ-Դարէի կռնակին բարձրացող բլուրի գագաթից քիչ վար ընկած է մի հարթ ապառաժ, նման բնական ամբիոնի։ Նրա առաջև դէպի արեւելք փռուած է Բոսֆորը, իսկ նոյն պատուանդանի տակ բացւում է ամենախոր և ահաւոր ձորերից մէկը։ Ամբիոնը երեք կողմից շրջապատուած է սաղարթախիտ ծառերով։ Այդ ծառերը տարածելով իրենց ճիւղերը, հիւսում են միմիանց հետ, ապառաժի վրայ ձևացնելով մի բնական տանիք, ծածկուած ծառերի հետ վեր բարձրացող պատուտակների ու բաղեղների գոյնզգոյն ծաղիկներով։

Այդ տեղը իւր վայրենի գեղեցկութեամբ միշտ գրաւել էր Զաբէլին. այդ պատճառով էլ, ճաշից յետոյ, Արմենակին առնելով, բարձրացան այնտեղ։ Տեսարանը Բէկեանի վրայ էլ ուժեղ տպաւորութիւն գործեց։ Ամբիոնի վրայ կողք կողքի կանգնած, լուռ ու անշարժ նայում էին ընութեան այդ անձեռագործ տեսարանին, որն իւր վայրենութեան մէջ ունէր ինչ-որ մի գերագոյն գեղեցկութիւն։ Նայում էին իրենց ոտքերի տակ բացուող կանաչ անդունդին և դէպի ալեծուփ Բոսֆորը, դէպի հեռաւոր լերանց ալիքները, որոնք գնալով նոսրանում, մշուշանում էին և լուծւում կապոյտ

հորիզոնի մէջ։ Տեսարանի տպաւորութիւնը այնքան զօրեղ ու հարուստ էր, որ թւել էր տալիս նրանց, թէ գտնւում են մի բոլորովին անծանօթ մոլորակի վրայ, ուր դեռ ամենայն ինչ կոյս է ու անարատ, որը մարդկային շնչով դեռ ապականուած չէ։ Որքան նիւթ կար խօսելու, ինչ հրաշալի բաներ՝ միմիանց ցոյց տալու. բայց լուռ էին. նրանց տիրում էր մի տեսակ սրբազան ընդարմացում, վերին յափշտակութիւն, որպիսին երևակայել կարող չէ ոչ մի մահկանացուի երևակայութիւն։

Ճիշտ այդ ժամանակ, այդ հանդիսաւոր բոպէին, մի զոյգ փոքրիկ թռչնիկներ ծառի դալար ոստի վրայ թառած, երգում, դայլայլում էին։ Նրանք իրենց կիսախուփ աչքերը դարձրած դէպի այն կողմ, դէպի ուր նայում էին Զաբէլն ու Արմենակը, կարծես այդ փոքրիկ արարածներն էլ յափշտակուած լինէին. որոնց անոյշ մեղեդին բնութեան գեղեցկութեան հետ մի դիւթական ներդաշնակութիւն էր կազմում։

— Ի՞նչ լաւ է այսպէս... որքան դիւթական...

Նազելի գլուխը անգիտակցաբար Արմենակի ուսին յինելով, ասաց Զաբէլը, որպէս թէ ինքը իւր սրտի հետ խօսելիս լինէր։

— Այս տեսարանը միշտ գրաւել է ինձ. շարունակեց նա. — այստեղ միշտ մի անծանօթ, անբացատրելի բան եմ զգացել իմ մէջ... Այժմ էլ

զգում եմ նոյն բանը և թւում է ինձ, թէ աշխարային զգացումները խոյս են տուել ինձնից. թէ գտնւում եմ մի սրբազան մթնոլորտում, աստուածային ինչ-որ լոյսով պարուրուած... Ի՞նչ է այս չը գիտեմ... Բայց որքա՛ն երջանիկ եմ...

Արմենակը նոյն երջանկութեամբ գինովցած, գրկել էր օրիորդի ճկուն իրանը և յափշտակութեամբ լսում էր նրա խօսքերը, ենթադրելով, թէ իւր ականջների տակ դայլայլում է՝ սիրոյ սգին։

Այդ ժամանակ մի նապաստակ, չը գիտես ինչից խրտնած, ճեղքեց թփերի հիւսուածքը, հանդիսաւոր լռութիւնը մի րոպէ վրդովելով։

Իսկ Զաբէլը անսպասելի դարձաւ Բէկեանին ու հարցրեց.

—Թռչնիկներն էլ սիրո՞ւմ են արդեօք...

—Թռչունները... բայց ի՞նչու արիք այդ հարցը։

—Այդ հարցն արծարծեցին իմ մէջ՝ ա՛յ, այն թռչնիկները, որ իրար կողքի թառած դայլայլում են... ինձ այնպէս է թւում, թէ նրանք սիրախօսում են... Ու շարժում են նախանձ։

—Թռչնիկները իրենց ենթադրեալ սիրախօսութեամբ շարժո՞ւմ են ձեր նախանձը։

—Այո՛... բայց գիտէ՞ք ինչու։

—Ո՛չ. ես այդ չը գիտեմ։

—Որովհետև նրանք երջանիկ են... Նայեցէք նրանց. հեռու ընկերական բամբասանքից, կեանքի հոգս ու վշտերից ազատ, անծանօթ արհեստական այն պայմաններին, սովորութիւններին ու օրէնքներին, որոնցով կաշկանդուած ենք. բլուրների այս բարձրութեան վրայ, կոյս ու կանաչ անտառի թաւուտքի մէջ, յայտնում են իրենց սէրը, հաղորդում են միմիանց քաղցր երգերով, սրբտառուչ բանաստեղծութեամբ... Սրանք չը գիտեն, թէ ի՞նչ է ամօթը, որ յաճախ սանձ է դնում սիրահարների շրթունքին. թէ ի՞նչ է սիրոյ դաւաճանութիւնը...

Ու սևորակ աչքերը Արմենակին դարձնելով եզրակացրեց.

—Սիրող թռչնիկներն աւելի երջանիկ են, քան սիրող մարդիկ։

—Այդ ճիշտ է, հաստատեց Արմենակը և յանկարծ միտքն ընկնելով, խօսք բաց արեց շոգենաւում տեղի ունեցած խօսակցութեան մասին մօր հետ և հարցրեց, թէ ի՞նչ էին նշանակում։

—Այն օրը ինձ դուրս էին բերում հրապարակ ցոյց տալու մի երիտասարդի, որին այսօր էլ չեմ ճանաչում, բայց որը եթէ հաւանէր, իմ ձեռքը պիտի խնդրէր։ Ճիշտ այդպէս հրապարակ են դուրս բերում ծախու անասուններին և այդ վիրաւորում էր ինձ... Լաւ էր, որ փոթորիկը խան-

գարեց, եթէ ոչ գուցէ նշանուած լինէի։

—Նշանուա՞ծ...

—Այո՛...

Արմենակը լռեց. բայց մտածում էր, որ եթէ այդ բանը տեղի ունենայ այժմ. ինքը կարող է խելքը կորցնել։

Եւ կարօտագին նայուածքով նայեց օրիորդին։

—Ի՞նչու եկանք այստեղ, բացականչեց Զաբէլը ձեռքը յուզուած կրծքին սեղմելով։

Արմենակը կրկին նայեց օրիորդին։ Նա արդէն հասկանում էր, որ աղջկայ կրծքի տակ փոթորիկ է կատաբուում, որ այո՛-ն ու ո՛չ-ը կռիւ են մղում։ Գիտէր, որ այդ փոթորիկը վերջապէս պիտի պայթի, սակայն ուզում էր, որ նա պայթի շուտով, հենց այժմ։

Եւ հարցրեց.

—Մի՞թէ զղջացի՞ք, որ եկանք այստեղ։

—Չը գիտեմ... Բայց կրկնում եմ, որ թուում է ինձ, թէ մօտեցել եմ արարչութեան, թէ զբաղուում եմ երկդիմութիւններով ու գաղտնիքներով լի կեանքի մակերևոյթից շատ վեր, այնքան վեր, ուր սրտերն ազատ են զգում իրենց սիրով բաբախելու և իւր լեզուները չեն կաշկանդուում սրտի զգացումների թարգմանը հանդիսանալու։

Բէկեանը կամացուկ ձեռքն իջեցրեց նրա գլխին։

Զաբէլը միւս թևն էլ նրա վզով փաթեելով, բուռն սիրոյ գինովութեամբ, մշուշապատ աչքերը վեր բարձրացրեց ու մրմնջաց.

—Էլ չեմ նախանձում թռչնիկներին... Նրանք երգում են, բայց չեն խօսում... Սակայն չը գիտեմ, Արմենակ, զգո՞ւմ էք, որ... սիրում եմ ձեզ... Դուք էլ սիրո՞ւմ էք...

Արմենակը չը պատասխանեց. նա այքան յուզուած էր, որ անկարող էր խօսել։ Բայց բառերի, խօսքերի այլևս կարիք չը կար. նա խոնարհեցրեց գլուխը և նրանց շրթունքը մօտեցան միմիանց...

Հանդիպակաց ճիւղի վրայ թառած թռչնիկները դեռ երգում էին իրենց սիրոյ մեղեդին և երգում էին այժմ աւելի բարձր, աւելի զգածուած դայլայլիկներով, որպէս թէ արդէն հասկացել էին կուսական երկու շրթունքների համբոյրի արժէքը և որոնց անոյշ դայլայլիկները արձագանք էին տալիս զոյգ սիրող սրտերի մէջ։

IX.

Այդ դէպքից մի քանի շաբաթ, յետոյ Բէկեանը Պարիզում հետևեալ նամակն ստացաւ իւր մօրից.

«Սիրելի՛ զաւակս.

«Պօլսից գրած նամակդ ստացայ, որին պա-

տասխանելով, շտապում եմ ուրախութիւնս յայտնել քեզ, ինձ անծանօթ օրիորդ Զաբէլի հետ նըշանուած լինելուդ մասին։ Ներողութիւն ես խնդրում, որ առանց ինձ նշանուեցար և յոյս ես յայտնում, թէ չեմ զլանալ տալ հաւանութիւնս... Այո՛, ես այդ չեմ զլանալ քեզնից... ընդհակառակը, կը փափակէի օր առաջ գրկել հարսնացուիս ու համբուրել նրան, որին այնքան գովում ես։

«Գրում ես թէ Զաբէլի հետ պայմանաւորուել ես առաջիկայ նոր տարու արձակուրդներին ինձ հետ Պոլիս գնալ և օրինաւորապէս նշանուելուց յետոյ, կրկին վերադառնալ ուսումդ շարունակելու... Շատ լաւ ես մտածել. բայց աւելի ուրախացրեց ինձ այն, որ Զաբէլն էլ հետներս պիտի գնայ Պարիզ մանկավարժութիւն ուսանելու... Ես կարող գուշակել, թէ որքան ուրախացրին ինձ այդ լուրերը և թէ ինչպէս սիրտս լցուած է ազնիւ հպարտութեամբ քեզ նման որդի, և Զաբէլի նման հարսնացու ունենալուս համար...

«Ինձ ամենևին չի զարմացնում այն, որ դու Զաբէլի ծնողաց մասին ոչ մի խօսք չես գրում։ Այդ բնական է, որովհետև Զաբէլից բացի ուրիշ ոչ մէկն աչքիդ չի ընկնում և չի հետաքրքրում։ Թո՛ղ այդպէս լինի, սիրելի որդեակս։

«Թէ ինչպէս պէտք է կարգադրել, որ միաժամանակ գտնուենք Պոլսում, այդ մասին մտա-

ծելու և ծրագրելու դեռ ժամանակ շատ ունենք. ուստի առայժմ ղրկում եմ քեզ մայրական ջերմ համբոյրներս։

«Քեզ կալծոգին սիրով սիրող մայրդ...»։

X.

1890 թ. Դեկտեմբեր 31-ի իրիկունն էր։

Գուրգէն էֆ. Օդեանի ապարանքը տօնական կերպարանք էր ստացել։ Հսկայական դահլիճը, որ զարդարուած էր կէս թրքական կէս եւրոպական ճաշակով և լուսաւորուած մոմերով ու ջահերով, լիքն էր ընտիր բազմութեամբ։ Հիւրերը դեռ շարունակում էին գալ և ամեն մէկի ներս մտնելով, դահլիճում՝ կարծես՝ նոր ոգի էր տիրապետում, նոր զրոյցներով աղմկում։

Պատուաւոր հիւրերի շարքում գտնւում էր նաև թաղի քարոզիչ սրբազանը։ Այդ օրը երեկոյեան ժամի մօտ տասին, արևելեան ճեպընթաց կառախմբով Պոլիս պիտի ժամանէր Բէկեանը իւր մօր հետ, երբ՝ ըստ կանխագոյն որոշման, տեղի պիտի ունենար նրա նշանադրութեան հանդէսը, օրիորդ Զաբէլի հետ։

Տ. Օդեանը իւր որդու և մօտիկ ազգականներից մի քանիսի հետ գնացել էին Սիրքէջիի կայարանը հիւրերին դիմաւորելու, իսկ հիւրերը դեռ

մի երկու ազատ ժամեր ունենալով, զրոյց էին անում։

Թրքահայերի համար այդ թուականներում զրոյցի առատ նիւթ կար։ Տեղի էր ունեցել Գումգաբուի դէպքը։ Աշըգեանը պատրիարքական գահից պինդ կպած, պոկ չէր գալիս։ Սահմանադրութեան վրայ ճնշում էր բանեցուում կառաւարութեան կողմից, տեղի էին ունեցել անթիւ ձերբակալութիւններ։ բանտերը լիքն էին անմեղ հայերով և յոյս կար թէ նոր տարու առթիւ նրանք պիտի ազատուեն բանտից։ Որովհետև Պոլսեցիք առհասարակ խոյս են տալիս հարցերի վրայ կանգ առնելուց և վիճաբանութիւնից, այդ պատճառով ընդհանուր ընաւորութիւն կրող հետաքրքիր հրնութիւնների ու նորութիւնների մասին խօսելուց յետոյ, խօսքը դարձաւ առօրեայ մանր մունր երեւոյթներին։ Հիւրերից մէկը, որ Քաղաքական ժողովի անդամ էր, պատմեց թէ ինչպէս մի աղքատ կին, չորս անչափահաս երեխաներին հետն առած, ահա՛ մի քանի օր է, ինչ մաշում է պատրիարքարանի դուռը, թափում է աղի արտասուք, քարերն է լիզում, որ օգնութեան ձեռք մեկնեն իրեն—ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում այդ մարմնացեալ թշուառութեան վրայ... Նա աւելացրեց, որ դեռ գտնուում են մարդիկ, որոնք ծաղրում են խեղճի աղքատութիւնը, նրա մերկութիւնը, նրա դողոց

ու ցնցումները ձմեռնային ցուրտ եղանակից։

—Թոյլ տուէք ես պատմեմ ձեզ մի այդպիսի դէպք, որ տեղի է ունեցել Կովկասում և որը թէև արդէն հնացած է, բայց շատ բնորոշ, ասաց Գուրգէն էֆէնդին Քաղաքական ժողովի անդամը պատմութիւնը վերջացնելուց յետոյ։

Հիւրերը ոչ միայն գոհ մնացին, այլև խնդրեցին, որ պատմէ, առարկելով թէ ըստ ժամանակագրութեան, սուրհանդակ գնացքի գալուն դեռ մի ժամից աւելի կայ։

Գուրգէն էֆէնդին աթոռներից մէկի վրայ նստելով, սկսեց.

—Ինչպէս գիտէք, քառասնական թուականները թրքահայերի վերածնութեան առաջին թուականներն են և թուրքիայի պատմութեան մէջ, բացառապէս հայերիս վերաբերմամբ, փայլուն էջերից մէկն են կազմում։ Իհարկէ այս ասում եմ թուրքիան թուրքիայի և թրքական պատմութիւնը թուրքիայի պատմութեան հետ համեմատելով։ Մահուան ու արիւնի վրայ հաստատուած այդ պետութիւնը, հուր ու սրի վրայ հիմնուած այդ կառաւարութիւնը կարծես զգում էր, որ քաղաքակրթութեան հոսանքը վերջ ու առաջ պիտի սրբէ, մաքրէ աշխարհիս երեսից բարբարոսութեան ախտեղութիւնները։ Պէտք էր որոշ չափով համակերպել ժամանակի պահանջներին, այնպիսի պահանջ-

ներին, որոնց զանցառութիւնը կարող էր փութացնել պետութեան կործանումը։ Թուրքիան արդէն վաղուց թողել էր իւր յարձակողա—նուաճողական քաղաքականութիւնը և պաշտպանողական դիրք էր բռնել թէ արտաքին և թէ ներքին թշնամիների դէմ։ Թուրքիայի խելօք քաղաքագէտները ընդունում էին բնութեան այն օրէնքը, որով բնաւորութեամբ ու բաղադրութիւնով հակառակ տարրերի խառնուրդից միշտ սպասելի է բորբոքում, պայթում։ Իսկ Թուրքիան հենց այդպիսի տարրերից էր բաղկացած և վաղուց էր, որ ներքին շփոթութիւնները սպառնում էին նրան պետական քայքայում։

«Այս կրիտիքական վիճակի մէջ էր Թուրքիան։

«Տիեզերական պատրիարքի վարկն ընկած էր յունական ապստամբութիւնից յետոյ. իսկ յոյն ժողովուրդը մի փոքրիկ հող ձեռք բերելուց յետոյ, կարծես ամեն ինչ վերջացած էր համարում և գոհ մնալով ստացած արտօնութիւններից, միտք էլ չունէր գործօն դեր խաղալու։

«Բալկանեան թերակղզու միւս ազգութիւնները նոյնքան կասկածելի էին կառաւարութեան աչքում և բացի այդ, նրանցից ոչ մէկը Թուրքիայում ցոյց չէր տուել ո՛չ քաղաքական, ո՛չ ֆինանսական և ո՛չ էլ վարչական մի առանձին ընդունակութիւն։

«Մնում էր հայ տարրը։

«Հայը երկար տարիներ Թրքական ծանր լուծը կրելուց յետոյ էլ ոչ միայն անհամեմատ աւելի խաղաղ էր և հաւատարիմ, այլև Թուրք պետութեան տուել էր նշանաւոր գործիչներ քաղաքական, ֆինանսական և վարչական պատասխանատու ասպարէզներում, որոնցից շատերը վայելում էին սուլթանի անձնական սէրը և բարեկամութիւնը։

«Սակայն արևմտեան ազգերի մտքերը յուզող քաղաքական հրատապ խնդիրները և այն էվոլուցիան, որի առաջ մէկը միւսի ետևից տապալւում էին սոցիալական հին կարգերը, հին օրէնքները, որոշ չափով ազդում էին նաև հայերի վրայ։ Նրանք կարծես հասկացել էին միութեան նշանակութիւնը։ Եւ նրանց մէջ սկսուել էր մի տեսակ շարժում։ Այո՛, այդ շարժումն էր, որ հիմք դրեց համքարային միութեան, որը մի տեսակ սպառնական միութիւն էր ամիրայական միահեծանութեան դէմ։ Բայց երևաց, որ համքարային միութեան գաղափարը շատ նեղ է, ուստի այդ միութիւնը ընդլայնելով, կազմեցին թաղական միութիւններ, որտեղից ծագեց սահմանադրութեան գաղափարը։

«Օսմանցին՝ ինչպէս՝ քնած չէր, ոչ էլ հայկական շարժումները տեղի էին ունենում գաղտնի կերպով։ Հպատակ ազգերի յարաբերութիւնները և նրանց գործունէութեան եղանակը սահմանող ո-

րոշ օրէնքներ չը կային։ Սրա հետ մէկ տեղ Սուլթանի կառաւարութիւնն էլ տրամադիր չէր խըստութիւններ բանեցնելով, հայերին էլ զինելու իւր դէմ, որոնց դատը արդէն մի անգամ գրուած էր եղել Պարիզում գումարուած վեհաժողովի քաղաքական շահմատի վրայ։ Կարծողներ կան թէ այդ թուականների շարժումները պաշտպանւում էին դեսպանների կողմից և թէ 1861 թ. ստորագրած Սահմանադրութեամբ հայերը պարտական են նրանց գործ դրած ճնշման Սուլթանի վրայ. սակայն այդ ճիշտ չէ։ Ալի փաշան, որ թուրքիայի ամենահեռատես քաղաքագէտն էր համարւում, համոզուած լինելով, որ թուրքիան իւր գոյութիւնը կարող է պահպանել միմիայն աստիճանական բարենորոգումների շնորհիւ, նա թոյլ էր տալիս, որ այդ փորձն անեն իրենք՝ հայերը և նկատելով թաղական միութիւնների տուած արդիւնքը, աջակցում էր Սահմանադրութեան ստորագրելու գործին։

Գուրգէն էֆէնդին իրեն մատուցուած սուրճը ընդունելով, շարունակեց։

«Մինչև այժմ պատմածս մի նախաբան էր կամ այսպէս ասած, բուն պատճառը այն դէպքի, որ խօստացայ պատմել ձեզ։

«Ինչպէս գիտէք, Սահմանադրութեան ներշնչած ոգևորութիւնը այնքան մեծ էր, որ խօսքով դժուար էր պատմել։ Որպէս մայրաքաղաքում,

նոյնպէս և գաւառներում բացուեցին բազմաթիւ դպրոցներ կրթական ժամանակակից մեթոդով։ Մայրենի լեզուն, որ անարգուած ու հալածուած էր և որը այնքան վնասում էր հայերի կուլտուրական առաջադիմութեան, սկսուեց աւանդուել նորաբաց դպրոցներում։ Զարմանալի է մտածել, թէ ազգի միահամուռ աշխատութեան առաջև ինչպէս խորտակւում, փշրվում էին ամենախոշոր արգելքները, տալով հրաշալի արդիւնք։ Դարաւոր հալածանքի ու ճնշման տակ հոգևարք հայը բանալով աչքը, յանկարծ ինքն իրեն զտել էր կեանքի մի նոր և ուժեղ հոսանքի մէջ։ Էլ կանգ առնելու, մտածելու ժամանակ չը կար. պէտքէր գնալ հոսանքի ուղղութեամբ, որ տանում էր դէպի այն լոյսը, որ նշմարւում էր արդէն պատռուած տգիտութեան վարագոյրի ետև։ Իսկ դէպի յառաջ փոխած ամեն մի քայլը նոր կեանք, նոր ոգի էր ներշնչում նրանց...

«Գէորգ Դ. Կաթողիկոսը, որ եռանդուն մասնակցութիւն էր ունեցել թրքա հայերի շարժման գործում, բազմելով Ս. Լուսաւորչայ գահի վրայ, Կովկասը շատ յետ ընկած գտաւ։ Մայրենի լեզուն, ազգային դպրութիւնը կամովին վտարուած էր։ Թիֆլիսի նահանգի հայերը խօսում էին վրացերէն, Շուշուայ, Գանձակի և Երևանի բնակիչները իրենց հայ գիւղօրայքով խօսում էին միտեսակ պարսկա-

խառն հայերէնով։ Նա գիտէր, որ լեզուն ազգային գոյութեան ամենագլխաւոր սատարներից մէկն է, ուստի վճռեց ի կատար ածել այն միտքը, որ իւր նախորդները՝ զանազան անկախ պատճառներով չէին կարողացել գլուխ բերել։ Այնէ—Ս. Էջմիածնում, Մայր-Տաճարին կից, Կաթողիկոսական Մայր-Աթոռի աչքի առաջև կանգնել հոգևոր ձեմարանը...

«Այդ թուականներում մասնագիտութիւնս Պարիզում աւարտելով, հենց նոր վերադարձել էի Պոլիս, երբ մի օր հայրս ասաց, որ Կաթողիկոսը վճռել է ձեռնարկել Էջմիածնի ձեմարանի կառուցման գործին, խնդրել է, որ յայտնի ճարտարապետների կարծիքը հարցնելով, նրանցից աւելի ձեռնհաս մէկին ուղարկէ Վաղարշապատ։

—«Զ՞ի կարելի, որ այդ պաշտօնը ինձ յանձնէք, ասացի ես, ճարտարապետութիւնը մասնագիտութիւնս է և զուր չէ, որ ոսկի մեդալ եմ ստացել։

«Հայրս հաւանութիւն տուեց և յանձնելով ինձ նաև մի խոշոր գումար յօգուտ կառուցանելի ձեմարանի, ճանապարհ ձգեց։

«Ուրախութեանս չափ ու սահման չը կար։ Արհամարելով նոյեմբեր ամսի սովորական փոթորիկները Սև ծովի վրայ և ցուրտն ու բուքը ցամաքի վրայ, ճանապարհ ընկայ դէպի Ս. Էջմիածին։

«Ի՜նչ երջանիկ օրեր, ինչ ոսկի յոյսեր ու երազներ, որոնք սակայն անակնկալ կերպով խորտակուեցան, մի խոր, շատ խոր սպի միայն թողնելով սրտիս վրայ, որը երբէք կարող չէ ջնջուել»...

Եւ Գուրգէն էֆ. լռեց. նրա դէմքն արտայայտում էր խորին վիշտ...

XI.

«Իմ ճանապարհորդութիւնը Պոլսից մինչև Ս. Էջմիածին տևեց ընդամենը տասնուհինգ օր, թէև այդ տասն և հինգ օրը ինձ համար տասն ու հինգ շաբաթից աւելի երկար տևեց։ Մի փոքր շունչ առնելուց և սուրճի գաւաթը դատարկելուց յետոյ, շարունակեց Գուրգէն Էֆէնդին։—Սակայն մինչև տեղ հասնելս, ձեմարանի կառուցման հարցն արդէն լուծուած էր։ Բացի այդ լոյս ընկան այնպիսի անկախ պատճառներ, որ իմ այնտեղ մնալը ոչ միայն աւելորդ էր, այլև անկարելի։ Ուստի Ս. Կաթողիկոսի աչն առնելով, փշրուած սրտով վերադարձայ Թիֆլիս, հայրենիք վերադառնալու մտքով։ Դեկտեմբերի կիսումն էր, սաստիկ ցուրտ ու փոթորկալից մի եղանակ։ Սակայն այդ նոյնքան անկատելի անցաւ ինձ համար, որքան Պոլսից Էջմիածին գնալիս։ Որպէս յոյսերով վառուած, նոյնպէս յուսախաբ մարդուն կարծես չեն ազդում բը-

նուիրեան խստութիւնները։ Այդ ես փորձել եմ իմ անձի վրայ։

«Թիֆլիս հասնելով լսեցի, որ ճանապարհը մինչև Փոթի փակուած է, իսկ Սև ծովի վրայ չը տեսնուած փոթորիկ ու ալեկոծութիւններ են տեղի ունենում։ Ստիպուած էի ամանօրի տօները Կովկասի մայրաքաղաքում անցնել, ուր ոչ մի ծանօթ չունէի։ Օրերը ձանձրալի էին անցնում, բայց՝ չը գիտեմ ինչու՝ Դեկտեմբեր 31-ը ամենատխուր օրերից մէկն էր։ Ի՞նչեր ասես չէին անցնում մըտքովս։ Հիւրանոցի կիսախաւար, ցուրտ և փոքրիկ սենեակում փակուած, աչքիս պատկերանում էր Պօլիսը, յատկապէս այդ տօների համար զարդարուած լիք խանութները. ուրախ դէմքեր, ծանօթ անձնաւորութիւններ. վերջապէս մեր տունը—հայրը, մայրս, ազգականներս, որոնք ուրախութեամբ պիտի դիմաւորէին նուիրական տօներին, պիտի լիշէին ինձ, առանց իմանալու, որ յուսախաբ ընկած եմ Թիֆլիսի հիւրանոցում և վիշտը կրծում է սիրտս...

«Ինձնից քիչ հեռու լսեցի երեկոյեան զանգակի ձայնը, որ հնչեց ականջիս նոյնքան տխուր ու մելամաղձոտ, որքան տխուր էի ես։ Թէև երկինքը ծածկուած էր համատարած մոխրագոյն ամպով, բայց երևում էր, որ արևը շատ էլ բարձր չէ։ Փչում էր ոչ զօրեղ, բայց խիստ ցուրտ քամի։

Հաստ մուշտակի մէջ փաթաթուելով դուրս ելայ փողոց։ Զնայելով մինչև մարդուս ոսկրները թափանցող ցուրտ քամուն, այնուամենայնիւ փողոցներում բաւական բազմութիւն կար. ամենքն էլ ուրախ, ամենքն էլ բեռնաւորուած զանազան կապոցներով, գոյնզգոյն թղթերի մէջ փաթաթած։ Տներից լսւում էին դայլիրալի, երգի ձայներ և այլ ուրախ աղաղակներ, որոնք շարժում էին նախանձս։

«Մի քանի ծուռ ու մուռ փողոցներ անցնելուց յետոյ, վերջապէս առաջևս բացուեց այն ճանապարհը, որ տանում էր Վանքի մայր եկեղեցին։ Նոյն փողոցով դէպի եկեղեցի էին գնում նաև մի քանի ալևոր տղամարդիկ ու պառաւ կանայք, իսկ զանգակները դեռ հնչում ու հնչում էին։

«Եկեղեցու բակը մտնելիս ուշադրութիւնս գրաւեց մի բան և ակամայ կանգ առայ։ Այն սարսափելի ցրտին, բարակ հագուստի մէջ, բարակ շալը գլխին ձգած, որ հասնում էր մինչև իրանը, կանգնած էր մի մանկահասակ աղջիկ։ Նրա դէմքը կապտել էր, իսկ ցրտի սաստկութիւնից դուրս ցայտած արտասուքի կաթիլները սառել, բիւրեղացել էին նրա թշերի վրայ։

«Ու ամբողջ մարմնով դողում էր։

«...Ծամի դրնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին,
Նրա հանդերձ պատառ-պատառ,
Զոնի շապիկ իւր հագին»...

«Այս երգը յանկարծ միտքս եկաւ, երբ նայեցի այն խեղճին։ Բայց մանկամարդ աղջկայ հագուստը պ ա տ ա ռ-պ ա տ ա ռ չէր. նա չէր նմանում աղքատի, այն սովորական աղքատներին, որոնց միշտ հանդիպում ենք։ Մ'իմայն թէ կանգնած էր ժամի դրնում, երկիւղած կերպով մեկնում էր ձեռքը ա ն ց կ ա ց ո ղ ի ն, ուր ոչ ոք ոչինչ չէր դնում։

«Պարիզի աղքատներին աչքովս տեսել էի և նրանց մասին կարդացել շատ բան, սակայն ի՞նչ ահագին տարբերութիւն նրանց և այս աղջկայ միջև։

«Ես մօտեցայ նրան։

—«Մ'ի՞թէ չէք մրսում, հարցրի։

—«Ցուրտ է, սաստիկ ցուրտ, պատասխանեց նա, բայց կարկամած բերանում շխկշխկացող ակռաներն արգելեցին շարունակել։

«Շատո՞ւց է կանգնած էք։

— «Շատուց...

—«Եւ ոչ ոք ոչինչ չը տուե՞ց, խեղճ աղջիկ։

—«Ոչինչ... պատասխանեց հառաչելով։

—«Անունդ ի՞նչ է։

—«Վարդուհի...

—«Հայր, մայր չունի՞ք։

—«Հայրս վաղուց է մեռել, մայրս մեռաւ մի քանի ամիս առաջ, խնամքիս թողնելով երկու որ-

բիկներ։

—«Խե՜ղճ... դուրս թռաւ շրթունքիցս։

«Նա նայեց ինձ. կարծես նրան զարմացնում էր իմ կանգնել զրոյց անելս ու ցաւակցելս։

—«Որքան դրամով կը բաւականանաք, հարցրի։

—«Զոր հացի և քիչ ածուխի գին, պարոն... մի կտոր հաց որբիկներին կերակրելու և քիչ ածուխ՝ նրանց սառած մարմինը տաքացնելու...

«Ես նրան տուեցի մի տասն ռուբլիանոց խոստանալով կրկին օգնել, պատուիրեցի գնալ և հարկաւոր բաներն առնել։ Տասն ռուբլին առաւ, նայեց ինձ, երբ տեսայ, որ ուզում է շնորհակալութիւն անել, բայց բառեր չի գտնում։

«Խե՜ղճ աղջիկ, գուցէ այդ չնչին դրամը նա մի շատ մեծ բան էր համարում. փրկանքի գին էր կարծում։ Բայց մ'ի՞թէ իրաւունք չունէր այդպէս կարծելու. մ'ի՞թէ նոյն պայմանների մէջ բիւրաւորները բարոյապէս կամ ֆիզիքապէս չե՞ն մեռնում, որոնք կարող էին ապրել, եթէ մի քանի ռուբլի ունենային։

—«Դուք ո՞րտեղ էք ապրում, հարցրի։

«Նա ինձ ասաց իրենց տան հասցէն, որ մինչև օրս էլ լաւ յիշում եմ։

—«Լա՛ւ, գնացէ՛ք. ասացի ես և շտապեցի եկեղեցի։ Ինձ այնպէս թւաց թէ մի ժամ առաջ

կապարի լեռան նման սրտիս վրայ ծանրացող տըխրութիւնը արդէն գլորուել էր և ինքս ինձ զգում էի այնքան թեթև ու այնքան ուրախ։

«Ամբողջ գիշերը քունս չը տարաւ. Վարդուհին չէր հեռանում աչքիցս և միշտ երևում էր ինձ ժամի դրանը կանգնած, ցրտից դողալիս և արտասուքի կաթիլները այտերի վրայ բիւրեղացած։

«Միւս օրը բաւական ուշ զարթնեցի։ Փողոցներն արդէն լիքն էին շնորհաւորական այցելութիւններ անող բազմութեամբ։ Ամենքն էլ ուրախ էին, ամենքն էլ ժպտադէմ ու գոհ։ Բայց Վարդուհին էլ գոհ էր։ Ես դուրս ելայ հիւրանոցից և շտապեցի նրա մօտ, երեկուայ մուրացիկ աղջկայ վիճակի հետ ծանօթանալու։ Թիֆլիսի փողոց կոչուած լաբիրինթոսի հետ անծանօթ լինելով, շատ էլ հեշտ չեղաւ նրա տունը գտնել, բայց վերջապէս գտայ։ Աւելորդ եմ համարում նկարագրել տեսածս, անշուշտ դուք գիտէք թէ ինչ վիճակ կարող է ունենալ մի անփորձ աղջիկ, որ ոչինչ չունի, բայց ունի իւր խնամքին թողած որբիկներ և զգալով դէպի այդ փոքրիկներն ունեցած պարտականութիւնը, ստիպուած է մուրալու...

«Բեկուած սրտով վերադարձայ հիւրանոց։

«Հայրս, ինչպէս գիտէք, միլիոնների տէր էր ու սերուած ամիրայական տոհմից։ Ես այդ տոհմի արիւնն էի կրում երակներիս մէջ և կեանքիս մեծ

մասն անցրել էի Պարիզի ազատ մթնոլորտում։ Բայց սրա հետ մէկտեղ պէտք է ասեմ, որ մի տարօրինակ բնաւորութիւն էի ներկայացնում։ Ամեն ինչ իմ մէջ հաստատուած էր ծայրայեղութիւնների վրայ։ Սէր կամ ատելութիւն—երկուսն էլ իմ մէջ բուռն էին։ Զափաւորութիւնն ինձ անծանօթ էր։ «Լաւ է ոչ սիրել, ոչ էլ ատել, քան սիրել կամ ատել չափով, կշիռով»—այս էր իմ հաւատամքը, իմ դօգման։ Ամեն բան անելուց առաջ ինքս ինձ հարց էի տալիս «կարո՞ղ եմ հոգով, սրտով նուիրուել նրան»։ Եթէ այո, ես անում էի. եթէ ոչ—հրաժարւում։

«Հիւրանոցում նստած մտածում էի։ Վառարանի մէջ ճարճատում էր այրուող փայտը և կայծեր արձակում։ Վարդուհին իւր պարզ ու համակրելի վարմունքով, իւր կախարդիչ պարկեշտութեամբ գրաւել էր ինձ։ Նա նմանում էր հասարակ մետաղի շրջանակի մէջ ամրացրած մի թանգագին ադամանդի։ Կեանքի պայմանները, լինին աղքատ կամ ճոխ, մարդու արժանաւորութեան վրայ ոչինչ չեն աւելացնում, այլ մարդն է, որ այդ պայմանների միջից աչքի է զարկում իւր իսկական արժէքով։ Ինքս իմ մէջ ամփոփուած, ես մտածում էի շատ այսպիսի բաների մասին, իմ ներսը կատարուող ինչ-որ յեղաշրջման մասին, որ թւում էր ինձ թէ շատ նման է սիրոյ զարգացման։

«Սակայն Վարդուհին աղքատ էր. մուրացիկ մի աղջիկ էր և դեռ երէկ էր, որ ժամի դրնում կանգնած պարզում էր ձեռքն անցկացողներին... Ես սաստիկ ամաչում էի, որ հարուստ եմ ծնուել, որ պայմանների ոսկի շրջանակի մէջ եմ դրուած: Այդ օրն աւելի լաւ համոզուեցի թէ ժողովրդային դասակարգութիւն ասածդ դրութիւնը ինչ խոր անդունդ է բաց անում մարդկանց միջև և ինչպէս բաժանում է մարդկանց իրարից սրտով, հոգով ու գաղափարով: Ու մտածում էի, որ եթէ ես էլ նրա նման մի մուրացիկ լինէի ժամի դրան միւս անկիւնում կանգնած և սրտիս մէջ զգայի նոյն թրթռումը, ինչպէս այժմ, համարձակ կը մօտենայի նրան ու կասէի — Օրիորդ, մենք պատկանում ենք միևնոյն դասակարգին, ճակատագիրը մեզ ձգել է միևնոյն պայմանների ու վիճակի մէջ. եկ միացնենք մեր ճակատագրերը, ես քեզ սիրում եմ...

«Է՛հ, կեանքի մէջ շատ անհեթեթ բաներ կան: Դրանցից մէկն է ժողովրդային դասակարգերի մէջ եղած խորութիւնը: Մէկը հարուստ է, կանգնած բարձր գիրքի վրայ. միւսը աղքատ է և կանգնած ստորին աստիճանի վրայ. սակայն սըրանք կեանքի ամենաթոյլ ցնցումներին չը դիմացող մի-մի անհիմն ու խարխուլ շէնքեր են... Տեղի ունեցաւ յանկարծ այդ ցնցումը, մէկ էլ տես-

նես — առաջինները վերջինների, վերջինները առաջինների տեղն են գրաւել:

«Այս հարցի մասին ես երկար վիճեցի ինքս ինձ հետ և վերջապէս յաղթանակը տարայ: Այդ յաղթանակը յօգուտ օրիորդի էր: Ինչո՞ւ է պէտք թէ նա աղքատ է, ամիրայական արիւն չի կրում երակների մէջ... Ինչո՞ւ է պէտք հասարակաց կարծիքն այն հարցում, որ բացառապէս ինձ է վերաբերում... Կեանքի երկաթի պայմաններով շրջանակուած այն առարկան, որ մարդիկ անպէտք ու չնչին կարծելով, ոտքի տակ են տալիս, տրորում, — ես գտել եմ, որ նա ադամանդ է և թանգագին ադամանդ: Այս արդէն բաւական էր ինձ և վճիռս որոշ ու վերջնական...

«Երեկոյեան ժամի հինգն անց էր, երբ դուրս եկայ հիւրանոցից: Ցուրտը աւելի սաստկացել էր. սառը քամին սրի նման կտրում էր մարդուս դէմքը, լուսամուտները ծածկուած էին սառոյցի հաստ շերտով. բայց փողոցներում դեռ ահագին բազմութիւն կար, որոնց վրայից ոգելից խմիչքների հոտ էր փչում: Ցներից լսւում էին քէֆի երգի աղմուկներ, ծափահարութիւն, թմբուկ, մուզիկայ բոլորը խառնուել էին միմիանց, ներկայացնելով մի տեսակ վայրենի երաժշտութիւն: Բայց այդ ամենը ինձ վրայ այն ազդեցութիւնը միայն ունեցան, որ աննկատելի կերպով հասայ Վարդուհու

բնական տունը։

«Դուռը բաղխեցի. ինքը՝ Վարդուհին բացաբեց և ըստ երևոյթին չափազանց զարմացաւ իմ անակնկալ և անժամանակ այցելութեանս վրայ։

— «Իրաւունք ունիք, օրիորդ, ինձ չեմիք ըսպասում, ասացի ես շփոթուած։

«Նա ոչինչ չը պատասխանեց։

«Ես աւելացրի.

— «Տագնապալից ժամեր անցրի, օրիորդ, և սրտիս ձայնին անսալով եկայ ասելու որ... ձեզ սիրում եմ... մի մերժէք ինձ ձեր ձեռքը. խոստանում եմ երջանիկ անել...

«Նա հազար գոյն փոխեց, այնուամենայնիւ գլուխը բարձրացնելով ասաց.

— «Ինչպէս տեսնում եմ, կարծել էք, որ ժամի դրնում անտէր աղջիկ էք գտել և մտածել էք ձեր հարստութեամբ շլացնելով, ինձ ձեր թակարդը գցել... Բարեգործութեան դիմակի տակ այդպիսի հրէշաւոր գործեր շատ են պատահում... Բայց սխալուել էք, պարո՛ն, յետ վերցրէք այն բոլորն, ինչ որ ձեր դրամով է գնուած... Ձեր վարմունքն աւելի ծանր է ինձ, քան մուրացկանութիւնը...

«Ու երկու քայլ յետ գնաց։

«Ես գլուխս կորցրի, զգալով, որ նա իրաւունք ունէր։ Նա էլ ժողովրդային դասակարգութեան մասին կարող էր ունենալ նոյն համոզումը, որպիսին ունի ամբողջ մարդկութիւնը։ Եթէ ծանր է բարձրից ցած նայել, նոյնքան ծանր է ցածից վեր նայելը։ Ուրեմն շատ բնական էր, որ իմ առաջարկը կեղծ երևալով, նրան վիրաւորուէր. բայց ունենալով արժանապատուութեան զգացում, ինձ մերժէր...

«Բայց ես յետին միտք չունէի. նպատակս անկեղծ էր ու սուրբ։ Այդ համոզումը քաջալերեց ինձ և ասացի.

— «Ձեզնից առաջ, օրիորդ, ես ինքս եմ մտածել այդ մասին և արդէն յայտնեցի, որ տագնապելի, տաժանելի ժամեր եմ անցրել, մինչև որ հաշտուել եմ ձեզ մօտ գալու մտքի հետ... Եւ չը գիտեմ, ի՞նչով և ի՞նչ լեզուով հաւատացնեմ ձեզ, թէ սիրում եմ և ամենևին չեմ խաբում։

«Վարդուհին գլուխը քարշ արեց, երևում էր, որ նրա ներսը բուռն կռիւ էր կատարւում։ Այս գլուխն բարձրացնելով ասաց.

— «Երդուեցէք ձեր պատուի վրայ...

«Ես երդուեցի և զգացի որ իմ կեանքիս մէջ մի այդպիսի անկեղծ երդում ոչ արել էի, ոչ էլ երբևիցէ կանէի։

«Այն ժամանակ նա թոյլ տուեց, որ հետս վերցրած մատանին անցնեմ իւր մատը։

XII.

— Միջանկեալ պիտի ասեմ, որ այս դէպքի մասին սկսեցի պատմել աւելի այն պատճառով, որ փեսայացուս, որին այսօր սպասում ենք իւր առաջան հանդիպած օրում յանկարծ զարթեցրեց իմ մէջ նրա յիշատակը և այն օրից ի վեր մոռանալ չեմ կարողանում. մի փոքր լռութիւնից յետոյ ասաց Գուրգէն էֆէնդին և շարունակեց իւր պատմութիւնը։

«Ասացի, որ մատանին անցրի Վարդուհու մատը, որ նշանակում է—նա դարձաւ իմ ընտրեալը, խօսեցեալը։ Այդ մասին միւս օրն և ելթ նամակ գրեցի հօրս, խնդրելով, որ անյապաղ ուղարկէ ինձ ամուսնութեան համար անհրաժեշտ թղթերը։ Որովհետև ես արդէն երեխայ չէի, ուստի կասկած չունէի, որ հայրս հաւանութիւն կը տար։ Իմ վստահութիւնը այնքան մեծ էր, որ շտապեցի յարմար բնակարան վարձել Վարդուհու համար, ըստ պատշաճի կահաւորեցի և միևնոյն ժամանակ գնեցի կամ պատուիրեցի պատրաստելու հարսանեաց անհրաժեշտ պէտքերը։

«Ի՜նչ երջանիկ օրեր էին... Իհարկէ ես ապրում էի հիւրանոցում, բայց մենք շարունակ միասին էինք լինում։ Եւ որքան մօտ ու լաւ էի ճա-

նաչում նրան, այնքան աճում էր սէրս, որովհետև օր չէր անցնում, որ ես նրա մէջ չը նկատէի մի նոր աղնուութիւն, նոր յատկութիւն։

«Բայց այն ժամանակ, երբ մենք անձնատուր էինք եղել սիրոյ արբեցութեան, ժամանակը իւր գործը կատարում էր. օրերն ու շաբաթները սահում էին մէկը միւսի ետևից։ Սակայն Պօլսից դեռ լուր չը կար։ Օրերի անցնելու հետ միասին, օրիորդի մէջ ինչ-որ գաղտնի մտահոգութիւն էի նկատում։ Անշուշտ նա մտածում էր թէ ինչ կը լինի եթէ Պօլսից մերժում ստանամ և իհարկէ զգում էր, որ դա մի ծանր հարուած կը լինի, որ ինքը ինչ-որ կախարդական քնից զարթնելով, ինքն իրեն պիտի գտնի նախկին թշուառ վիճակի մէջ, որպէս ժամի դրնում կանգնած մի մուրացիկ...

«Բայց այդ մտահոգութիւնը տևում էր շատ կարճ. նա էլ երևի արդէն ճանաչել էր ինձ և համոզուած, որ ես երդումս չեմ դրժի...

«Ներեցէք սիրոյ մասին երկու խօսք ասել. գիտեմ որ սէրը մի առեղծուած է, որին ես լաւ բացատրել չը պիտի կարողանամ, բայց կասեմ այն, ինչպէս հասկանում եմ, ինչ որ ես զգում եմ։

«Ինձ թւում է թէ սէրը ունի իւր սեփական աչքը, սեփական գիտակցութիւնը, ըմբռնումը, միտքը։ Մենք նայում ենք առարկաներին զանազանում մենք սևն սպիտակից, մեծը փոքրից, գեղե-

ցիկը տգեղից... Այս բոլորը թեւում է մեզ և այս թեւումէ-ն հաստատում են բոլոր մեզ պէս աչք ունեցողները։ Սակայն մեր տեսածը իրերի արտաքին երեւոյթն է և այն խոշորացոյցի դիմելու հարկ չունեցող խոշոր երեւոյթը, այնինչ նոյն այդ իրերի ներքինը, միջուկը, որ աւելի հետաքրքիրն է, մեզ անտեսանելի է, որովհետև մեր աչքերն նրանց ներսը թափանցելու ընդունակութիւնից զուրկ են։ Օրինակ հարիւր մղոն հեռաւորութեան վրայ դուք տեսնում էք մի լեռ, մոխրագոյն ու լերկ, թէև նա ծածկուած է խորթ ու բորթով և հսկայական ծառերով։ Դուք տեսնում էք նաև ինձ ու լսում խօսքերս, բայց միթէ ձեր աչքերն ընդունակ են տեսնելու նաև այն, թէ ինչ է կատարւում իմ ներսը, մտքիս, սրտիս ու հոգոյս խորքերում...

«Սակայն երկու միմիանց սիրող զոյգերը, եթէ ոչ առաջին օրից, գէթ հանդիպումի և նախասիրոյ երկրորդ շրջանում, նրանք միմիանց շատ լաւ են ճանաչում և որպէս մի բաց գիրք, նրանք կարդում են միմիանց մտքերը, սրտերն ու հոգիները և տեսնում այն բոլորը, ինչ որ անցնում է նրանց մէջ... Վերջապէս սիրոյ աչքին հայելանում է սիրեցեալի ներքին աշխարհը իւր բոլոր մանրամասնութեամբ...

«Ուրեմն զարմանալի չէ, որ մենք լիովին հաս-

կանում էինք միմիանց հոգու դարձուածքները։

«Եթէ մարդս տուփանքի զգացումին յաղթելու չափ ուժեղ կամք ունենայ, դիւրաւ կարող է հասկանալ, թէ ինչ տարրերից է բաղկացած իւր սիրեցեալը, որքան համապատասխան է իրեն։ Իսկ այսպիսի դիպուածում ամուսնական դժբախտութիւններ շատ քիչ կը պատահեն։

«Բայց ես շեղուեցի։

«Բուն բարիկենդանին մի երկու շաբաթ մնացած, երբ նստած էինք ճաշի սեղանի վրայ, կրկին խօսք բացուեց մեր ամուսնութեան մասին.

—«Ի՞նչ կանես, եթէ հայրդ հաւանութիւն չը տայ, հարցրեց Վարդուհին։

«Ես դրական շեշտով ու խորին համոզմունքով պատասխանեցի

—«Դա անկարելի է...

«Նա մտազբաղ կերպով նկատեց.

—«Այնուամենայնիւ օրերն անցնում են։

«Ես աշխատեցի հանգստացնել նրան և արդարացնել հօրս։

—«Նա երբեմն ամիսներով բացակայ է լինում քաղաքից, ասացի. պատասխանի ուշանալը ես դրանով եմ բացատրում։

«Ես տեսայ, որ Վարդուհու նախազգացումը հակառակն էր պնդում, թէև աշխատում էր այդ բանը թագցնել ինձնից։

«Ես վրայ բերի.

—«Վարդուհի, ես մասամբ ուրախ կը լինեմ, եթէ մեր ամուսնութիւնը մեզանից անկախ պատճառով մի քանի ամսով յետաձգուի։

«Նա հարցական կերպով նայեց ինձ։

«Ես կրկնեցի.

—«Այո՛, ուրախ կը լինէի. մի շատ լաւ ծրագիր եմ կազմել, որին անշուշտ կը հաւանես

—«Ի՞նչ ծրագիր...

—«Սքանչելի ծրագիր... այ օրինակ եթէ մինչև բուն բարեկենդանի վերջին օրերը թղթերն ստացուին, մենք իհարկէ կամուսնանանք, իսկ եթէ ոչ, այն ժամանակ ակամայ պիտի յետաձգենք։ Այն ժամանակ գարունը կը բացուի, բնութիւնը կը զարդարուի... Մենք կը գնանք Վաղարշապատ և Ս. Էջմիածնայ տաճարում կը կատարենք մեր պսակի խորհուրդը... Ջ՞է որ մեզ արգելող չը կայ... Դու չես եղել Էջմիածնում, բայց անշուշտ գիտես, թէ որքան նուիրական մի վայր է նա հայերիս համար... Նա հայութեան սիրտն է, մեր խնկելի պապերի սուրբ արիւնով լուացուած ու օծուած սիրտը... Ինձ թւում է թէ այնտեղ, այն սրբազան կամարների տակ միշտ սաւառնում են մեր վեհաշուք պապերի սուրբ հոգիները... Այդ նուիրական տաճարի մէջ, նրա երկնակառոյց կամարների տակ, մեր խնկելի պապերի ս. հոգիների

ներկայութեամբ կը տանք մենք միմիանց մեր յաւիտենական սիրոյ անդառնալի երդումը, կը կռենք մեր ամուսնութեան նուիրական դաշինքը, ուխտելով...

«Ո՜հ ինչ սրբազան ուխտ, ինչ վսեմ նպատակներ...

«Այդ ամենը, որ վերջն այնքան անողոք կերպով փշրուեցին, այնքան ինձ ոգևորել էին, որ՝ ներեցէք համարձակութեանս, համբուրեցի իրեն և բաժակս բաժակին զարկելով ասացի.

—«Միածնի Իջման տաճարը ահա՛ տասնուհինգ դար է, որ գոյութիւն ունի... Նրա վրայ թագաւորներ, թագուհիներ ու իշխաններ են բանել, իրենց հաւատքի ու արտասուքի շաղախով յօդել նրա իւրաքանչիւր մի քարը միւսի հետ... Քանի՜ քանի թագադրութիւններ, իշխանական ամուսնութիւններ, կաթողիկոսական սուրբ օծումներ են տեղի ունեցել նրա սրբազան կամարների տակ... Սուրբ Էջմիածնի կենացը, Վարդուհի, Նրա յաւիտենակութեանը...

«Եւ դատարկեցինք մեր բաժակները... Այդքան թանգագին ու անոյշ բաժակ երբէք այլևս դատարկած չեմ։

XIII.

«Զատկական տօներից յետոյ, մի օր առաւօտեան ժամի մօտ տասին հիւրանոցի սպասաւորը տուեց ինձ մի փակ ծրար։ Նամակը կրում էր իմ հասցէն, և գրուած էր Վարդուհու ձեռքով։ Նա առաջին անգամն էր. որ ինձ նամակ էր գրում և գրում էր ահա թէ ինչ.

— «Սիրելի Գուրգէն.

— «Գիտեմ սրանով մեծ վիշտ եմ պատճառում քեզ, բայց ստիպուած եմ գրել... Երեկ իրիկունը քո գնալուց յետոյ, ինձ մօտ եկաւ մի անծանօթ պարոն, բարձրահասակ, ինչպէս դու, արծուի աչքերով ու քթով, տարիքը մօտ վաթսունի։—Գուրգէնի հարսնացուն ես, հարցրեց։ — Այո՛, պատասխանեցի ես։ Նա ասաց—Ես Գուրգէնի հայրն եմ... Քո հայրը, Գուրգէն, քո հայրը։ Ուզեցի չոգել և ձեռքը համբուրել։ Նա արգելեց և աւելացրեց.— Ձեզ սպասեցնել տուի, կը ներէք ինձ։ Բայց ահա ինքս եմ եկել և եկելեմ ձեզ հետ խօսելու մի շատ լուրջ խնդրի մասին... Գիտէք, իւրաքանչիւր մի մարդ ծնւում է կեանքի մէջ իւր որոշ դերը կատարելու. Գուրգէնը ծնուած է մեծութեան ու փառքի համար, որպիսի ասպարէզները լայն բացուած են նրա առաջ։ Սակայն մարդիկ

շատ դժուար են հասկանում իրենց բուն կոչումը և կոշկակարութեան համար ծնուածը յանկարծ ընտրում է գիտնական ասպարէզ և ընդհակառակը կամ որևէ մի սխալ որոշմամբ իւր առաջև փակում է յառաջադիմութեան ճանապարհը։ Գուրգէնը ձեզ ընտրելով իրեն հարսնացու, խորտակում է իւր ամբողջ ապագան... Ուրեմն եթէ ձեր սէրը անկեղծ է և անշահ, դուք պէտք էք հրաժարուէք նրա կինը դառնալու մտքից... Հօրդ խօսքերը շանթահարեցին ինձ. հազիւ թէ կարողանում էի ինքս ինձ կանգուն պահել։ Ես նայեցի նրա երեսին։ Երևի իմ նայուածքի մէջ կար և յանդիմանութիւն և աղաչանք և ամեն ինչ, որովհետև նա խսկոյն ասաց—Ես չեկայ ձեզ ստիպելու... խօսում եմ յանուն ձեր սիրոյ և թողնում եմ ձեր ազատ կամքին... միայն աւելորդ չեմ համարում կրկնելու, որ այդ պահանջում է ձեր սիրած տղամարդու շահերը։ Ես չը կարողացայ ինքս ինձ զսպել ու հարցրի թէ ինչու նա կամենում է. որ միմիայն ես անեմ այդ ծանր զոհաբերութիւնը... Նա պատասխանեց ինքնավստահ շեշտով—Որովհետև ես հաւանութիւն տալ չեմ կարող, թէ ինչու, այդ իմ գաղտնիքն է... Ես իհարկէ կարող էի գնալ որդուս մօտ և նոյն բանը պահանջել նրանից. բայց չարեցի այն հեռատեսութեամբ, որ նա տղամարդ է և կարող էր մերժել ինձ։ Այդ

մերժումից առաջ կը դար մեր յարաբերութիւններ-
ի խզումը. ուրիշ խօսքով նա կը զրկուէր ժա-
ռանգութեան իրաւունքից։ Այդ է պատճառը, որ
վճռեցի նախ դիմել ձեզ։ Իմ համոզումը կանանց
մասին ընդհանրապէս շատ էլ նպաստաւոր չէ,
բայց գիտեմ, որ ջերմ սիրով սիրող կանայք աւելի
ընդունակ են ծանր զոհաբերութիւններ անելու,
քան տղամարդիկ։ Դա բացառութիւն կազմող
կանանց բացառական յատկանիշն է, որով կա-
րող են պարծենալ։ Ես իհարկէ չը գիտեմ, թէ
դուք ո՞ր դասակարգին էք պատկանում, ուստի
կրկին յիշեցնում եմ, որ եթէ յամառելու լինիք,
ստիպուած կը լինեմ դարձնելու երեսս և վարուե-
լու քիչ առաջ ասածիս նման... Ընտրեցէք որն էլ
կուզէք... Երևակայիր Գուրգէն, թէ որքան ծանր
ու կրիտիքական էր դրութիւնս։ Յանուն սիրոյ
պահանջում էին, որ ես հենց այդ սէրը զոհ բե-
րեմ ինչ-որ ինձ անհասկանալի մի քմահաճութեան
և պահանջում էին սպառնալիքով հանդերձ։ Ոչինչ
էին իմ աչքում փառք, պատիւ, հարստութիւն։
Եթէ ինձ մնար, քեզնից չը զրկուելու համար ես
կը զոհէի այդ բոլորը, կը զոհէի ամեն ինչ...
Բայց միթէ դուէլ կը զոհէիր... Ես անպայման
հաւատացած եմ, որ դու կանէիր աւելին, քան
ընդունակ է անելու մի թոյլ ու անզօր աղջիկ,
որի մէջ բնաւորութիւնը դեռ կազմակերպուած

չէ, սակայն այդ բոլորը, մանաւանդ ձեր հօր յա-
ւիտենական բաժանումը չը պիտի՞ դառնար մի սև
բիծ մեր ամուսնական կեանքի պայծառ երկնքի
վրայ և այդ կարծեցեալ փոքր բիծը ժամանակի
ընթացքում լայնանալով ու բարձրանալով չը պի-
տի՞ մթագնէր մեր կեանքի հորիզոնը... Նախազգա-
ցումը, որ երբէք չի խաբել ինձ, ասում էր, որ այդ
բանը տեղի պիտի ունենայ ու մեծ ճիգ գործ դնելով
վրաս պատասխանեցի հօրդ—Ես համաձայն եմ...
(ո՛հ հերոս հոգի, բացականչեց Գուրգէն էֆ. խօս-
քի մէջ) Այդ ես արի յանուն քո ապագայ երջան-
կութեան, փառքի ու մեծութեան, որ քեզ հա-
մար գուշակում է հայրդ։ Ապա հայրդ առաջար-
կեց ինձ ընդունել մի խոշոր գումար, որպէս ա-
պահովութիւն... Ես մերժեցի... Ա՛խ մի՞թէ կա-
րող էի որև է գումարով ծախել սէրս... (վեհան-
ձըն աղջիկ) Երբ նամակս ստանաս, ես այլևս քա-
ղաքումս չեմ լինի և յանուն մեր դժբախտ սիրոյ
երդուեցնում եմ քեզ, որ չը մտածես ինձ որոնել...
Միշտ դժբախտ պիտի լինիմ, բայց դժբախտութեա-
նըս մէջ էլ չը պիտի դադարեմ քեզ յիշելուց և
քո մասին աղօթելուց։

Քո դժբախտ Վարդուհի»։

Գուրգէն էֆէնդին այս տխուր յիշողութեան
տպաւորութեան տակ մի րոպէ քարշ արեց գլուխը,
ապա դարձաւ հիւրերին.

— Մի պահանջէք, պատմել ձեզ, թէ որպիսի տպաւորութիւն թողեց վրաս այդ նամակը. դա մի ռումբ էր. բայց ո՛չ, ռումբը թեթեւ է, ոչինչ է. դա մի ահեղ կայծակ էր, որ անսպասելի պայթեց գլխս։ Այդ բոլէին եթէ ձեռքս ընկնէր հայրս, գուցէ պատառոտէի... թողնել ճակատագրի կամքին մի աղջիկ, որ ոչ ոք չունէր և դեռ մի քանի ամիս առաջ ժամի դրնում դողդողալով ողորմութիւն էր խնդրում—այդ անկարելի էր. անկարելի էր մանաւանդ այժմ երբ նա... յղի էր։ Կատաղած առիւծի նման դուրս թռայ նրան որոնելու, սակայն մի շաբթուայ անդադար որոնումներս այն հետևանքն ունեցան, որ ձեռնունայն ու յուսահատ վերադարձայ հիւրանոց...

Գուրգէն էֆ. խօսքը դեռ չէր վերջացրել, երբ դուրսն աղմուկ լսուեց։ Այդ աղմուկը հանում էին սպասած թանգագին հիւրերը նրանց դիմաւորողների հետ։ Ապա դահլիճի դուռը բացուելով ներս մտաւ Արմենակ Բէկեանը իւր մօր հետ։

Հիւրերը մի մարդու նման ոտքի ելան ի պատիւ նորեկների։

—Ահա՛ Զաբէլս, որին այնքան փափագում էիր տեսնել, ահա և իւր հայրը, ասաց Արմենակը։

Տ. Բէկեանը գրկաբաց դիմեց Զաբէլին, բայց հենց այդ ժամանակ նրա և Գուրգէն էֆ. նայուածքները հանդիպեցին միմիանց։ Կարծես սառը ջուր թափուեց նրանց գլխին։ Երկուսն էլ կանգնած էին դէմ ու դէմ միմիանցից մի երկու քայլ հեռաւորութեան վրայ։ Նրանց աչքերի մէջ պարզ նկատելի էր թէ զարմանք և թէ տարակուսանք։

—Հենց նոր վերջացրի այն տխուր դէպքի պատմութիւնը, որ տեղի ունեցաւ սրանից քսան տարի առաջ. կարծես ինքը իւր հետ խօսելով ասաց Գուրգէն էֆէնդին։

Որքան ծանօթ էր տ. Բէկեանին այդ ձայնը, այդ զանգակի նման հնչիւն ու քաղցր ձայնը։

—Ո՛հ ինքն է... նա ինքը, տէր Աստուած...

—Այո՛ և ի՞նչ զարմանալի զուգադիպութիւն...

Տ. Բէկեանը ոչինչ չը պատասխանեց. նա ժողովելով բոլոր ոյժերը խլեց Զաբէլի ձեռքը և դարձաւ որդուն.

—Քո՛յրդ է, Արմենակ ջան քոյրդ...

Ու ուժասպառ ընկաւ որդու թևերի մէջ։

—Քոյրը՞... շշնջացին բոլորը։

Ու տիրեց խորին, անթափանց լռութիւն...

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍՅԱՍ Ի ՅԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0359453

42800